Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
փետրվարի 28-ի N 142 - Ա որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
հունվարի 17-ի N 38 - Ա որոշման

| DIRECT AGREEMENT | ՈՒՂՂԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ |
|---|---|
| **THIS DIRECT AGREEMENT** (including the Appendices hereto) (the "**Agreement**") is made on ___ February 2019, among: | **ՍՈՒՅՆ ՈՒՂՂԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ** (ներառյալ դրա հավելվածները) («**Պայմանագիր**»)՝ կնքվել է 2019թ-ի փետրվարի ______-ին հետևյալ կողմերի միջև. |
| (a) The Government of the Republic of Armenia (the "**Government**"); | (a) Հայաստանի Հանրապետության Կառավարության («**Կառավարություն**»), |
| (b) ArmPower CJSC, a closed joint stock company established under the laws of the Republic of Armenia (the "**Developer**"); | (b) ԱրմՓաուեր ՓԲԸ-ի՝ փակ բաժնետիրական ընկերության, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենքների ներքո («**Կառուցապատող**»), |
| (c) Renco S.p.A., a corporation organized and existing under the laws of the Republic of Italy (the "**Sponsor**" and, together with the Developer, the "**Developer Parties**"); | (c) Ռենկո Ս.պ.Ա-յի՝ ընկերության, որը կազմակերպվել և գոյություն ունի Իտալիայի Հանրապետության օրենքների ներքո («**Հովանավոր**» և Կառուցապատողի հետ միասին՝ «**Կառուցապատողի Կողմեր**»), |
| (d) Ameriabank CJSC, a closed joint stock company established under the laws of Republic of Armenia, acting in its capacity as onshore collateral agent pursuant to the Collateral | (d) «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի՝ փակ բաժնետիրական ընկերության, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենքների ներքո, և որը գործում է տեղական Տեղական Գրավի Գործակալի կարգավիճակում՝ համաձայն սույն |

Agency and Intercreditor Agreement (as defined on <u>Schedule 1</u> attached hereto) and the Financing Documents dated as of the date hereof (together with its successors and assigns in such capacity and designees, the "**Onshore Collateral Agent**");

օրով թվագրված Տեղական Գրավի Գործակալության և Միջվարկատուական Պայմանագրի (ինչպես սահմանված է Հավելված 1-ում) և Ֆինանսավորման Փաստաթղթերի (այդ կարգավիճակում իր իրավահաջորդների և ցեսիոներների և նշանակված անձանց հետ միասին՝ «**Տեղական Գրավի Գործակալ**»),

(e) Asian Development Bank, an international organization established by the Agreement Establishing the Asian Development Bank ("**ADB**" and a "**Senior Lender**");

(e) Ասիական Զարգացման Բանկի՝ միջազգային կազմակերպության, որը հիմնադրվել է Ասիական Զարգացման Բանկի Հիմնադրման պայմանագրով («**ԱԶԲ**» և «**Ավագ Վարկատու**»),

(f) DEG – Deutsche Investitions- und Entwicklungsgesellschaft mbH, a financial institution incorporated and existing as a limited liability company under the laws of the Federal Republic of Germany ("**DEG**" and a "**Senior Lender**");

(f) ԴԷԳ – Դոյչե. Ինվեստիցիոնս- ունդ Էնտվիքլունգսգեզելշաֆթ մբՀ-ի՝ ֆինանսական հաստատության, որը հիմնադրվել է և գործում է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքների ներքո («**ԴԵԳ**» և «**Ավագ Վարկատու**»),

(g) The OPEC Fund for International Development, an international organization established by the Agreement Establishing OFID, having its headquarters at Parkring 8, 1010 Vienna, Austria ("**OFID**" and a "**Senior Lender**"); and

(g) ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամի՝ միջազգային կազմակերպության, որը հիմնադրվել է ՕՖԻԴ-ի Հիմնադրման Պայմանագրով, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Փարքրինգ 8, 1010 Վիեննա, Ավստրիա հասցեում («**ՕՖԻԴ**» և «**Ավագ Վարկատու**»),

(h) International Finance Corporation, an international organization established by the Articles of Agreement among its member countries, including the Republic of Armenia ("**IFC**" and a "**Senior Lender**", and, together with ADB, DEG and OFID, the "**Senior Lenders**").

(h) Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի՝ միջազգային կազմակերպության, որը հիմնադրվել է իր անդամ երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջև կնքված պայմանագրով («**ՄՖԿ**» և «**Ավագ Վարկատու**», իսկ ԱԶԲ-ի, ԴԵԳ-ի և ՕՖԻԴ-ի հետ միասին՝ «**Ավագ Վարկատուներ**»)**:**

## RECITALS

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(1) WHEREAS, each Developer Party and the Government have entered into that certain Framework Agreement dated as of April 27, 2017, as amended and restated on November 13, 2018 and amended by Amendment No. 1 dated December 14, 2018 (as further amended, modified and supplemented from time to time, the "**Framework Agreement**").

(1) ՔԱՆԻ ՈՐ յուրաքանչյուր Կառուցապատողի Կողմը և Կառավարությունը 2017թ-ի ապրիլի 27-ին կնքել են Շրջանակային Համաձայնագիրը, ինչպես այն փոփոխվել և վերաշարադրվել է 2018թ-ի նոյեմբերի 13-ին, և փոփոխվել է 2018թ-ի դեկտեմբերի 14-ով ամսագրված թիվ 1 լրացուցիչ համաձայնագրով (ինչպես այն կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել և լրացվել՝ «**Շրջանակային Համաձայնագիր**»).

(2) WHEREAS, on or about the date hereof, the Developer has entered or will enter into one or more senior loan agreements with each Senior Lender (the "**Loan Agreements**") and a common terms agreement (the "**Common Terms Agreement**"), by and among, *inter alios*, the Senior Lenders, Law Debenture Corporate Services Limited, a company incorporated under the laws of England and Wales (the "**Intercreditor Agent**") and the Onshore Collateral Agent, pursuant to which the Senior Lenders will make loans and extend other credit to the Developer.

(2) ՔԱՆԻ ՈՐ սույն Պայմանագրի ամսաթվին կամ դրա մոտակայքում Կառուցապատողը կնքել է կամ կկնքի մեկ կամ մի քանի վարկային պայմանագրեր յուրաքանչյուր Ավագ Վարկատուի հետ («**Վարկային Պայմանագրեր**») և ընդհանուր պայմանների մասին համաձայնագիր («**Ընդհանուր Պայմանների Մասին Համաձայնագիր**»), ի թիվս այլոց, Ավագ Վարկատուների, Լո Դիբենչը Քորփրիթ Սերվիսիզ Լիմիթիդ, Անգլիայում և Ուելսում գրանցված ֆինանսական հաստատության («**Միջվարկատուական Գործակալ**») և Տեղական Գրավի Գործակալի միջև, համաձայն որոնց Ավագ Վարկատուները պետք է Կառուցապատողին տրամադրեն փոխառություններ և այլ վարկեր.

(3) WHEREAS, as security for all of the Secured Obligations (as defined in the Common Terms Agreement), pursuant to that certain Movable Property Pledge Agreement dated on or about the date hereof among the Developer, the Onshore Collateral Agent and the Senior Lenders (the "**Movable**

(3) ՔԱՆԻ ՈՐ որպես բոլոր Ապահովված Պարտավորությունների (ինչպես սահմանված են Ընդհանուր Պայմանների Մասին Պայմանագրում) ապահովություն՝ համաձայն Կառուցապատողի, Տեղական Գրավի Գործակալի և Ավագ Վարկատուների միջև սույն Պայմանագրի ամսաթվին կամ դրա մոտակայքում ստորագրված շարժական գույքի գրավի պայմանագրի («**Շարժական Գույքի**

**Property Pledge Agreement**") and the Security Documents (as defined in Schedule 1 hereto) the Developer has granted or will grant to the Onshore Collateral Agent a security interest in all of its right, title and interest in, to and under the Framework Agreement, acting for and on behalf of itself, the Senior Lenders and IFC, as interest rate hedge counterparty, (collectively, the "**Secured Parties**"). The Loan Agreements, the Common Terms Agreement, the Movable Property Pledge Agreement and the Security Documents, along with the other Financing Documents (as defined in the Common Terms Agreement), are collectively referred to herein as the "**Financing Documents**".

**Գրավի Պայմանագիր**») և Ապահովման Փաստաթղթերի (ինչպես սահմանված են Հավելված 1-ում), Կառուցապատողը շնորհել է կամ պետք է շնորհի Տեղական Գրավի Գործակալին, որը գործում է իր, Ավագ Վարկատուների և ՄՖԿ-ի՝ որպես տոկոսների հեջավորման կողմի, անունից (միասին՝ «**Ապահովված Կողմեր**»), ապահովման շահ Շրջանակային Համաձայնագրի նկատմամբ և դրա շրջանակներում ծագող իր բոլոր իրավունքների, սեփականության իրավունքի և շահերի նկատմամբ: Վարկային Պայմանագրերը, Ընդհանուր Պայմանների Մասին Համաձայնագիրը, Շարժական Գույքի Գրավի Պայմանագիրը և Ապահովման Փաստաթղթերը՝ այլ Ֆինանսավորման Փաստաթղթերի հետ միասին (ինչպես դրանք սահմանված են Ընդհանուր Պայմանների Մասին Համաձայնագրում), այսուհետ կոչվում են սույն Պայմանագրում «**Ֆինանսավորման Փաստաթղթեր**»:

NOW THEREFORE IT IS AGREED:

ՈՒՍՏԻ ՍՈՒՅՆՈՎ ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆՎԵՑԻՆ.

1. **Superiority of Armenian Law and Regulations; Relationship to the Framework Agreement; Definitions**

1. **Հայաստանի Հանրապետության օրենքի և իրավական ակտերի գերակայությունը. Շրջանակային Համաձայնագրի հետ կապը; Սահմանումներ**

(a) This Agreement confirms, clarifies and supplements, for the comfort of the Senior Lenders, the undertakings, consents, representations and acknowledgements of the Government made in the Framework Agreement.

(a) Սույն Պայմանագիրը հաստատում, պարզաբանում և լրացնում է՝ Ավագ Վարկատուների հանգստության համար, Կառավարության պարտավորությունները, համաձայնությունները, հավաստումները և հաստատումները, որոնք կատարվել են Շրջանակային Համաձայնագրում:

(b) Neither the Framework Agreement nor this Agreement is intended nor may it be

(b) Ո՛չ Շրջանակային Համաձայնագիրը և ո՛չ էլ սույն Պայմանագիրը նախատեսված չեն և չեն կարող մեկնաբանվել, թե դրանք փոխարինում են որևէ

interpreted to supersede the supervisory and governance authority and responsibilities of any Government Authority under the Applicable Laws, including with respect to any measures prescribed by the Applicable Laws and taken by the National Assembly of the Republic of Armenia or the Government in case of a national or regional emergency to protect Armenia's national security and the welfare of its population including without limitation with respect to the generation and distribution of electricity from, and the operation of, the Plant that is the subject of the Framework Agreement and the urgent circumstances that could pose an immediate danger or threat to the generation and uninterrupted flow and distribution of electricity from the Plant.

Պետական Մարմնի՝ Կիրառելի Օրենքներով սահմանված կառավարչական կամ վերահսկողական իրավասությունները և պարտականությունները, այդ թվում Կիրառելի Օրենքներով նախատեսված և Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կամ Կառավարության կողմից ազգային կամ տարածաշրջանային արտակարգ իրավիճակ-ների դեպքում ձեռնարկվող այնպիսի միջոցները, որոնք ուղղված են պաշտպանելու Հայաստանի ազգային անվտանգությունը և իր բնակչության բարեկեցությունը, այդ թվում, առանց սահմանափակման, Շրջանակային Համաձայնա-գրի առարկա հանդիսացող Կայանի շահագործման, էլեկտրական էներգիայի արտադրման և բաշխման առումով, ինչպես նաև այնպիսի հրատապ հանգամանքներում, որոնք կարող են անմիջական վտանգ կամ սպառնալիք ստեղծել Կայանի կողմից էլեկտրաէներգիայի անխափան արտադրությանը, հոսքին և բաշխմանը:

(c) The parties to this Agreement agree that this Agreement is the Direct Agreement that relates to the Framework Agreement, which remains in full force and effect.

(c) Սույն Պայմանագրի կողմերը համաձայնվում են, որ սույն Պայմանագիրը՝ Ուղղակի Պայմանագիրն է, որը վերաբերում է Շրջանակային Համաձայնագրին, որն ամբողջովին պահպանում է իր ուժն ու գործողությունը:

(d) Unless otherwise defined in this Agreement (including the appendices and schedule attached hereto), all capitalized terms used in this Agreement have the meanings given to them in the Framework Agreement.

(d) Եթե այլ բան սահմանված չէ սույն Պայմանագրում (այդ թվում սույն Պայմանագրի հավելվածներում), սույն Պայմանագրում մեծատառերով գրված բոլոր եզրույթները ունեն նույն նշանակությունը, ինչ Շրջանակային Համաձայնագրում:

## 2. Representations and

## 2. Հավաստումներ և երաշխավորումներ

**Warranties**

The Government hereby represents and warrants to each of the Developer Parties, the Onshore Collateral Agent and each of the Secured Parties that:

Կառավարությունը սույնով հավաստում և երաշխավորում է յուրաքանչյուր Կառուցապատողի Կողմին, Տեղական Գրավի Գործակալին և յուրաքանչյուր Ապահովված Կողմին, որ.

(a) it has all regulatory authorizations necessary, except for those procured or renewed in the normal course of government administration, for it to legally perform its obligations under this Agreement and the Framework Agreement;

(i) նա ունի կարգավորող մարմինների կողմից տրվող բոլոր անհրաժեշտ լիազորությունները, բացառությամբ այնպիսի լիազորությունների, որոնք ձեռք են բերվում կամ թարմացվում են պետական կառավարման բնականոն ընթացքում, որպեսզի նա օրինական կերպով կատարի սույն Պայմանագրով և Շրջանակային Համաձայնագրով իր ստանձնած պարտավորությունները,

(b) the execution, delivery and performance of this Agreement and the Framework Agreement are within its powers, have been duly authorized by all necessary action and do not violate any of the terms and conditions in its governing documents, any contracts to which it is a party or any law, rule, regulation, order or the like applicable to it;

(j) սույն Պայմանագրի և Շրջանակային Համաձայնագրի ստորագրումը, հանձնումը և կատարումը գտնվում է իր լիազորությունների շրջանակներում, պատշաճորեն լիազորվել է բոլոր անհրաժեշտ գործողություններով և չի խախտում իր որևէ նորմատիվ փաստաթղթի, որևէ պայմանագրի, որի կողմ է նա, կամ որևէ օրենքի, կանոնի, իրավական ակտի, հրամանի կամ նրա նկատմամբ կիրառելի որևէ այլ նմանատիպ փաստաթղթի որևէ պայման կամ դրույթ,

(c) this Agreement, the Framework Agreement and each other document executed and delivered by it in accordance herewith or therewith, are in full force and effect and constitute its legally valid and binding obligations enforceable against it in accordance with their respective terms; and

(k) սույն Պայմանագիրը, Շրջանակային Համաձայնագիրը և յուրաքանչյուր այլ փաստաթուղթ, որը ստորագրվել է և ներկայացվել է իր կողմից դրանց համաձայն, ամբողջովին վավերական են և ուժի մեջ են, և հանդիսանում են իր իրավաբանորեն վավերական և պարտավորեցնող պարտավորու-թյունները, որոնք կարող են հարկադրվել իր նկատմամբ համաձայն դրանց համապատասխան պայմանների, և

(d) to the best of its knowledge, it is not in default under any covenant or obligation hereunder or under the Framework Agreement, and to its actual knowledge, none of the Developer Parties is in default under any covenant or obligation under the Framework Agreement.

(l) որքանով որ իրեն հայտնի է, առկա չէ իր կողմից սույն Պայմանագրի կամ Շրջանակային Համաձայնագրի որևէ հանձնառության կամ պարտավորության խախտում, և իր փաստացի տեղեկությունների համաձայն առկա չէ Կառուցապատողի Կողմերից որևէ մեկի կողմից Շրջանակային Համաձայնագրի որևէ հանձնառության կամ պարտավորության խախտում:

**3. Security Assignments in connection with Debt Financing**

**3. Փոխառու Ֆինանսավորման հետ կապված Ապահովում Իրավունքի Զիջմամբ**

(a) The Government (i) subject to its receipt of the Financing Documents as provided in Section 6(b) (*Sharing of Information and Notice of Material Events*) hereof, irrevocably consents to (A) any assignment as collateral security or accession by way of security to the extent permissible under the Applicable Laws, by the Developer Parties (or, if applicable, their Affiliates) to be made under the terms of the Financing Documents of each Developer Party's respective right, title and interest in the Framework Agreement including, without limitation, rights to receive payments (if any) under the Framework Agreement; and (B) the Onshore Collateral Agent's rights to enforce, on behalf of the Secured Parties, such right, title and interests, subject to the provisions of this Agreement, and (ii) acknowledges that the Developer Parties may, under the Financing Documents, grant collateral security in favor of

(a) Կառավարությունը, (i) պայմանով, որ նա կստանա Ֆինանսավորման Փաստաթղթերը, ինչպես նախատեսված է սույն Պայմանագրի 6(b) Կետում (Տեղեկատվության տրամադրումը և էական իրադարձությունների մասին ծանուցումը), սույնով անչեղարկելիորեն տալիս է իր համաձայնությունը. (Ա) այնքանով, որքանով դա թույլատրելի է Կիրառելի Օրենքներով, որպես ապահովման միջոց՝ գրավի առարկայի զիջմանը կամ պայմանագրի կողմի փոփոխմանը Կառուցապատողի Կողմերի (կամ, եթե կիրառելի է, նրանց Փոխկապակցված Անձանց) կողմից՝ Ֆինանսավորման Փաստաթղթերի պայմանների համաձայն՝ Շրջանակային Համաձայնագրով յուրաքանչյուր Կառուցապատողի Կողմի համապատասխան իրավունքների, սեփականության իրավունքի և շահի, այդ թվում, առանց սահմանափակման, Շրջանակային Համաձայնագրով սահմանված կարգով վճարումներ ստանալու իրավունքների (այդպիսիք առկա լինելու դեպքում) առնչությամբ, և (Բ) սույն Պայմանագրի պայմանների պահպանման պայմանով՝ Տեղական Գրավի Գործակալի կողմից Ապահովված Կողմերի անունից այդպիսի իրավունքների, սեփականության իրավունքի և շահերի նկատմամբ հարկադրման իրավունքներին, և (ii) ընդունում է, որ

the Onshore Collateral Agent for the benefit of the Secured Parties with respect to each of the Developer Parties' right, title and interest, as applicable, over all of its other assets, including its rights under the Framework Agreement, the Power Purchase Agreement, the Plant, the Project Site and with respect to the ownership interest in the Developer (the "**Collateral**").

Կառուցապատողի Կողմերը կարող են Ֆինանսավորման Փաստաթղթերի համաձայն շնորհել գրավային ապահովում Տեղական Գրավի Գործակալին՝ ի շահ Ապահովված Կողմերի՝ յուրաքանչյուր Կառուցապատողի Կողմի իր մնացած բոլոր ակտիվների հետ կապված որևէ իրավունքի, սեփականության իրավունքի և շահի նկատմամբ, համապատասխանաբար, այդ թվում՝ Շրջանակային Համաձայնագրով և Էլեկտրական Էներգիայի Գնման Պայմանագրով սահմանված իր իրավունքների, Կայանի, Ծրագրի Տարածքի և Կառուցապատող ընկերությունում բաժնետիրական շահի նկատմամբ:

(b) In the event of enforcement of the Collateral, and provided that at such time the Plant has not been materially damaged to an extent that would prevent it from being continuously operated in accordance with applicable environmental and safety standards (unless such material damage is repairable and is being, or is schedule to be, repaired using insurance proceeds available in accordance with the terms of the Common Terms Agreement), the Secured Parties agree that the assets and rights that are critical for ensuring uninterrupted operation and maintenance of the Plant shall not be transferred to different Persons, and may only be transferred to a single Eligible Transferee, provided that, in all cases, the shares of the Developer may be transferred to one or more Persons, each of which is an Eligible Transferee.

(b) Գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու հնարավոր դեպքերում, պայմանով, որ այդ պահի դրությամբ Կայանը չի ենթարկվել այնպիսի էական վնասվածքի, որը կխոչընդոտեր դրա շարունակական շահագործումը կիրառելի բնապահպանական և անվտանգության ստանդարտներին համապատասխան (բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի էական վնասվածքը կարող է վերականգնվել, և գտնվում է վերականգման ընթացքում կամ ծրագրվում է վերականգման ապահովագրական հատուցումների հաշվին՝ համաձայն Ընդհանուր Պայմանների Մասին Համաձայնագրով նախատեսված պայմանների), Ապահովված կողմերը համաձայնվում են որ Կայանի շարունակական շահագործման համար էական համարվող գույքը և իրավունքները չեն կարող մաս-մաս փոխանցվել տարբեր Անձանց և կարող են փոխանցվել միայն մեկ Իրավասու Փոխանցառուի, պայմանով՝ բոլոր դեպքերում, որ Կառուցապատողի բաժնեմասերը կարող են փոխանցվել մեկ կամ մի քանի անձանց, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է Իրավասու Փոխանցառու:

(c) After delivery to the

(c) Կառավարությանը Միջվարկատուական

Government by the Intercreditor Agent of a notice of an event of default (however defined) under the Financing Documents, the Onshore Collateral Agent may, but is not required to, exercise any and all rights of either Developer Party under the Framework Agreement in accordance with its terms and subject to the requirements of the Applicable Laws, and the Government agrees to accept such exercise and to observe and perform the obligations expressed to be assumed by it in the Framework Agreement, in accordance with the terms of that agreement, subject in any event to the provisions of Section 7(d) (*Onshore Collateral Agent's Notice and Cure Rights*) hereof.

Գործակալի կողմից Ֆինանսավորման Փաստաթղթերի շրջանակներում տեղի ունեցած կետանցի դեպքի մասին (ինչպես էլ այն սահմանված լինի) ծանուցում ներկայացվելուց հետո, Տեղական Գրավի Գործակալը կարող է, սակայն պարտավոր չէ, գործարկել ցանկացած Կառուցապատողի Կողմի ցանկացած կամ բոլոր իրավունքները Շրջանակային Համաձայնագրով՝ դրա պայմաններին համապատասխան, և Կառավարությունը պարտավոր է ընդունել նման գործարկումը և հետևել և կատարել պարտավորությունները, որոնք նա պետք է կատարի Շրջանակային Համաձայնագրի համաձայն՝ այդ պայմանագրի պայմանների համաձայն՝ ցանկացած դեպքում սույն Պայմանագրի 7(d) կետի (Տեղական Գրավի Գործակալի ծանուցման և խախտման վերացման իրավունքներ) դրույթների պահպանմամբ:

(d) The Government agrees to execute any additional documents reasonably requested by the Onshore Collateral Agent to record and perfect the collateral assignment and accession of the type described in clause (a) above and any amendments to the Movable Property Pledge Agreement or any other relevant documents, including any replacement or addition of the Onshore Collateral Agent or a Secured Party, it being understood that such additional documents are not intended to impose additional financial obligations on or otherwise impair the rights of the Government under the Framework Agreement, the Side

(d) Կառավարությունը համաձայնվում է ստորագրել ցանկացած լրացուցիչ փաստաթուղթ, որը ողջամտորեն պահանջվում է Տեղական Գրավի Գործակալի կողմից՝ արձանագրելու և գրանցելու համար գրավի առարկայի զիջումը կամ պայմանագրի կողմի փոփոխությունը, ինչպես նկարագրված է վերը նշված (a) կետում, ինչպես նաև Շարժական Գույքի Գրավի Պայմանագրի կամ Ապահովման Փաստաթղթերի կամ ցանկացած այլ համապատասխան փաստաթղթի ցանկացած փոփոխություն, այդ թվում՝ Տեղական Գրավի Գործակալի կամ Ապահովված Կողմի ցանկացած փոփոխություն կամ հավելում՝ պայմանով, որ նման լրացուցիչ փաստաթղթերը ուղղված չեն լինի Կառավարության մոտ լրացուցիչ ֆինանսական պարտավորությունների առաջացմանը կամ այլ կերպ Շրջանակային Համաձայնագրի, Հավելյալ Համաձայնագրի կամ սույն Պայմանագրի ներքո Կառավարության

Agreement or this Agreement.

իրավունքների խախտմանը:

(e) Without prejudice to the foregoing, the Government shall not be liable to any Developer Party for any actions taken or failure to act in accordance with or pursuant to the terms of this Agreement.

(e) Չհակասելով վերոգրյալին՝ Կառավարությունը պատասխանատվություն չի կրում որևէ Կառուցապատողի Կողմի կողմից սույն Պայմանագրի դրույթների համաձայն կատարված կամ չկատարված որևէ գործողության համար:

(f) The Onshore Collateral Agent (acting on the instructions of the Intercreditor Agent (itself acting on the instructions of the Instructing Group (as defined in the Common Terms Agreement))) shall provide to the Government copies of any document, application, registration or other instrument required by the Applicable Laws to be filed, registered or signed and delivered by the Onshore Collateral Agent relating to any subsequent exercise of rights under this Agreement within a reasonable time period of such document, application, registration or other instrument being filed, registered or signed and delivered, as the case may be.

(f) Տեղական Գրավի Գործակալը (գործելով Միջվարկատուական Գործակալի հանձնարարականների համաձայն (ով իր հերթին գործում է Հանձնարարող Խմբի հանձնարարականների համաձայն (ինչպես սահմանված է Ընդհանուր Պայմանների Մասին Համաձայնագրով))), պետք է Կառավարությանն ապահովի ցանկացած փաստաթղթի, դիմումի, գրանցման կամ Կիրառելի Օրենքներով պահանջվող ցանկացած այլ փաստաթղթի պատճեններով, որոնք պետք է ներկայացվեն, գրանցվեն կամ ստորագրվեն և հանձնվեն Տեղական Գրավի Գործակալի կողմից՝ կապված սույն Պայմանագրով սահմանված իրավունքների ցանկացած հետագա գործարկման հետ՝ համապատասխանաբար այդ փաստաթղթի, դիմումի, գրանցման կամ այլ փաստաթղթի ներկայացման, գրանցման և հանձնման համար նախատեսված ողջամիտ ժամկետում:

**4. Payments to be made to Secured Accounts**

**4. Ապահովված Հաշիվներին կատարվող վճարումները**

The Government irrevocably agrees that all amounts duly payable by it to the Developer under or in connection with the Framework Agreement or this Agreement will be exclusively paid in immediately available funds, without deduction, setoff or counterclaim, only into accounts of the Developer identified

Կառավարությունն անչեղարկելիորեն համաձայնվում է, որ բոլոր վճարումները, որոնք պետք է կատարվեն իր կողմից Կառուցապատողին Շրջանակային Համաձայնագրի կամ սույն Պայմանագրի, Ծրագրի, Կայանի կամ Ծրագրի Տարածքի հետ կապված, պետք է բացառապես վճարվեն անմիջապես հասանելի միջոցներով՝ առանց պահումների, հաշվանցումների կամ

| | |
|---|---|
| in writing by the Developer. | հակընդդեմ պահանջների, և միայն Կառուցապատողի հաշիվներին, որոնք գրավոր կնշվեն Կառուցապատողի կողմից: |
| **5. Limitations on Fundamental Changes** | **5. Հիմնարար փոփոխությունների սահմանափակումը** |
| The Government agrees that it will not, without the prior written consent of the Onshore Collateral Agent, which consent shall not be unreasonably withheld: | Կառավարությունը համաձայնում է, որ չպետք է առանց Տեղական Գրավի Գործակալից նախապես ստացված գրավոր համաձայնության, որի տրամադրումը չի կարող անողջամիտ կերպով մերժվել՝ |
| (a) consent to or accept any total or partial termination or any transfer, assignment or pledge (other than as contemplated by this Agreement) of the Framework Agreement and/or the Developer Parties' interests in the Project by either Developer Party; | (a) համաձայնի կամ ընդունի Շրջանակային Համաձայնագրի և/կամ որևէ Կառուցապատողի Կողմի շահերի ամբողջական կամ մասնակի դադարումը կամ որևէ փոխանցումը, զիջումը կամ գրավադրումը (բացառությամբ սույն Պայմանագրով նախատեսված դեպքերի), |
| (b) amend or modify, or permit or agree to any amendment or modification of, the Framework Agreement; or | (b) լրացնել կամ փոփոխել, կամ թույլատրել կամ համաձայնվել Շրջանակային Համաձայնագրի որևէ լրացմանը կամ փոփոխմանը, կամ |
| (c) sell, assign, transfer or otherwise dispose of any part of its interest in this Agreement or the Framework Agreement. | (c) վաճառել, զիջել, փոխանցել կամ այլ կերպ տնօրինել սույն Պայմանագրում կամ Շրջանակային Համաձայնագրում իր ունեցած շահի որևէ մաս: |
| **6. Sharing of Information and Notice of Material Events** | **6. Տեղեկատվության տրամադրումը և էական իրադարձությունների մասին ծանուցումը** |
| (a) The Government will: | (a) Կառավարությունը պետք է՝ |
| (i) give the Onshore Collateral Agent a copy of each written notice, request or demand it delivers to or receives from either Developer Party under | (i) Տեղական Գրավի Գործակալին տրամադրի յուրաքանչյուր գրավոր ծանուցման, պահանջի կամ նախապահանջի պատճենը, որը նա ներկայացնում է որևէ |

the Framework Agreement or in connection with the Project at the same time it gives (or, in the case of materials that it receives, promptly after receipt of) such notice, request or demand; and

Կառուցապատողի Կողմին կամ ստանում է որևէ Կառուցապատողի Կողմից Շրջանակային Համաձայնագրի համաձայն կամ Ծրագրի հետ կապված՝ այդ ծանուցման, պահանջի կամ նախապահանջի տրման հետ միաժամանակ (կամ ստացվող նյութերի դեպքում, անմիջապես ստանալուց հետո), և

(ii) notify the Onshore Collateral Agent promptly of any breach or any action or failure to act by either Developer Party that with the passage of time or notice could become a breach under the Framework Agreement, of which the Government actually becomes aware.

(ii) անհապաղ ծանուցի Տեղական Գրավի Գործակալին որևէ Կառուցապատողի Կողմի կողմից որևէ խախտման, գործողության կամ անգործության մասին, որի մասին Կառավարությունն իրականում տեղեկանում է, և որը ժամանակի ընթացքում կամ ծանուցման տրման դեպքում կարող է դիտվել որպես Շրջանակային Համաձայնագրի խախտում:

The Onshore Collateral Agent shall as soon as reasonably practicable forward to the Intercreditor Agent a copy of any document received by the Onshore Collateral Agent from the Government under this clause (a).

Տեղական Գրավի Գործակալը հնարավորինս շուտ պետք է Միջվարկատուական Գործակալին ուղարկի Տեղական Գրավի Գործակալի կողմից Կառավարությունից ստացված ցանկացած փաստաթղթի պատճենը՝ սույն (a) կետի համաձայն:

(b) The Onshore Collateral Agent and the Senior Lenders hereby consent to the Developer providing the Government an opportunity to review substantially final drafts of the Financing Documents identified on <u>Schedule 1</u> attached hereto (collectively, the "**Developer Financing Documents**"), and to the delivery, to the Government, of the Developer Financing Documents and all ancillary agreements and documents reasonably related thereto. Each Developer Financing Document shall be

(b) Տեղական Գրավի Գործակալը և Ավագ Վարկատուները սույնով համաձայնում են, որ Կառուցապատողը Կառավարությանը հնարավորություն տա ծանոթանալ Հավելված 1-ում նշված Ֆինանսավորման Փաստաթղթերի էապես վերջնական նախագծերին (միասին՝ «Կառուցապատողի Ֆինանսավորման Փաստաթղթեր»), և Կառավարությանը Կառուցապատողի Ֆինանսավորման Փաստաթղթերի և բոլոր առնչվող պայմանագրերը և փաստաթղթերի ներկայացնելուն: Յուրաքանչյուր Կառուցապատողի Ֆինանսավորման Փաստաթուղթ պետք է ներկայացվի Կառավարությանը

submitted by the Developer to the Government within ten (10) days from the execution of such document by all parties thereto.

Կառուցապատողի կողմից այդ փաստաթղթի դրա բոլոր կողմերի կողմից ստորագրվելու օրվանից հաշված տասը (10) աշխատանքային օրվա ընթացքում:

## 7. Onshore Collateral Agent's Notice and Cure Rights

## 7. Տեղական Գրավի Գործակալի ծանուցում և խախտման վերացման իրավունքներ

(a) The Government agrees that it shall not, as a result of breach or non-performance of or default of either Developer Party under the Framework Agreement, cancel or terminate, or suspend performance under, the Framework Agreement or consent to or accept any cancellation, termination or suspension thereof, unless the Government shall have first delivered to the Onshore Collateral Agent written notice stating that it intends to exercise such right on a date not less than (i) if on account of any payment default, one hundred twenty (120) days after the date of such notice, or (ii) if on account of any non-monetary default, one hundred eighty (180) days after the date of such notice, (in either case, the "**Notice Period**") and specifying the nature of the default giving rise to such right (and, in the case of a payment default, specifying the amount thereof). The Onshore Collateral Agent shall be permitted (on behalf of, and as instructed by, the Intercreditor Agent) to cure such default during the Notice Period by making a payment in the amount in default or by performing or causing to be

(a) Կառավարությունը համաձայնում է, որ Շրջանակային Համաձայնագրով որևէ Կառուցապատողի Կողմի պարտավորությունների չկատարման կամ խախտման հետևանքով չպետք է չեղյալ համարի, դադարեցնի Շրջանակային Համաձայնագիրը, կամ կասեցնի դրա կատարումը, կամ համաձայնություն տա կամ ընդունի ցանկացած նման կասեցում, չեղարկում կամ դադարեցում, եթե Կառավարությունը նախապես չի ներկայացրել Տեղական Գրավի Գործակալին գրավոր ծանուցում՝ նշելով, որ այն մտադիր է կիրառել այդ իրավունքը ծանուցման ամսաթվից հետո՝ (i) նման ծանուցման ամսաթվից հաշված մեկ հարյուր քսան (120) օրվա ընթացքում, եթե դա արվում է վճարային պարտավորությունների խախտման հիմքով, կամ (ii) նման ծանուցման ամսաթվից հաշված մեկ հարյուր ութսուն (180) օրվա ընթացքում, եթե դա արվում է ոչ վճարային պարտավորությունների խախտման հիմքով, **(յուրաքանչյուր դեպքում՝ «Ծանուցման ժամանակահատված»),** նշելով խախտման բնույթը, որը հիմք է հանդիսացել նման իրավունքի առաջացման համար (իսկ վճարային պարտավորության խախտման դեպքում՝ նշելով դրա գումարը): Տեղական Գրավի Գործակալին թույլատրվում է (Միջվարկատուական Գործակալի անունից և վերջինիս հանձնարարականի համաձայն) վերացնել նման խախտումը՝ Ծանուցման ժամանակահատվածի ընթացքում՝ համապատասխանաբար վճարում կատարելու միջոցով՝ վճարման ենթակա

performed the obligation in default, as the case may be. The Government agrees that it will not prevent, obstruct or frustrate the diligent exercise and performance by any of the Onshore Collateral Agent, the Developer Parties or any other Person of any rights or obligations of the Developer Parties under the Framework Agreement or any Project Agreement, and the Senior Lenders and the Developer Parties shall reasonably consult with, and keep informed, the Government about any remedial action taken as contemplated by the preceding sentence.

գումարի չափով, կամ նաև պարտավորության կատարման կամ պարտավորության կատարումն առաջացնելու միջոցով: Կառավարությունը համաձայնում է, որ չի խոչընդոտի կամ խափանի Տեղական Գրավի Գործակալի, որևէ Կառուցապատողի Կողմի կամ որևէ այլ Անձի կողմից Շրջանակային Համաձայնագրի կամ որևէ Նախագծի Պայմանագրի ներքո Կառուցապատողի Կողմերի որևէ իրավունքի կամ պարտականության ողջամիտ կատարմանը, իսկ Ավագ Վարկատուները և Կառուցապատողի Կողմերը պետք է ողջամտորեն խորհրդակցեն Կառավարության հետ և վերջինիս տեղեկացնեն նախորդ նախադասության մեջ նախատեսվածի համաձայն ձեռնարկված բոլոր գործողությունների մասին, որոնք ուղղված է իրավիճակի շտկմանը:

(b) Notwithstanding anything to the contrary in this Section 7 or otherwise, if at any time the Onshore Collateral Agent delivers a written notice to the Government and the Developer Parties that an event of default (however defined) under the Financing Documents has occurred and is continuing and that the Onshore Collateral Agent is exercising its rights under the Movable Property Pledge Agreement, then, until the Government receive a further written notice from the Onshore Collateral Agent indicating that the Developer Parties may again exercise their rights under the Framework Agreement, the Onshore Collateral Agent (and not the Developer Parties) shall be entitled to enjoy all of the right, title, benefit and interest of the Developer Parties under the

(b) Չհակասելով սույն 7-րդ բաժնով սահմանված որևէ դրույթին կամ որևէ այլ պայմանին, եթե Տեղական Գրավի Գործակալը ցանկացած պահի գրավոր ծանուցում է ներկայացնում Կառավարությանը և Կառուցապատողի Կողմերին, որ տեղի է ունեցել և շարունակվում է Ֆինանսավորման Փաստաթղթերի շրջանակներում խախտում (ինչպես էլ այն սահմանված լինի), և Տեղական Գրավի Գործակալը իրականացնում է իր իրավունքները Շարժական Գույքի Գրավի Պայմանագրերի ներքո, ապա մինչև Կառավարության կողմից հետագա գրավոր ծանուցում Տեղական Գրավի Գործակալից ստանալը, առ այն, որ Կառուցապատողի Կողմերը կարող են կրկին իրականացնել իրենց իրավունքները Շրջանակային Համաձայնագրի ներքո, Տեղական Գրավի Գործակալը (այլ ոչ թե Կառուցապատողի Կողմերը) իրավունք կունենա օգտվելու Շրջանակային Համաձայնագրի ներքո Կառուցապատողի Կողմերի բոլոր իրավունքներից, սեփականության իրավունքից և

Framework Agreement and be entitled to make all demands, give all notices, take all actions and exercise all rights of the Developer Parties under the Framework Agreement, in each case, in accordance with and subject to their respective terms and the requirements of the Applicable Laws, and the Government shall comply in all respects with such exercise. For the avoidance of doubt, the Plant may only be operated by the Developer or another Person holding a valid license for operation of the Plant.

շահերից, և իրավունք կունենա ներկայացնել բոլոր պահանջները, տալ բոլոր ծանուցումները, կատարել բոլոր գործողությունները և իրականացնել Կառուցապատողի Կողմերի Շրջանակային Համաձայնագրով նախատեսված բոլոր իրավունքները, յուրաքանչյուր դեպքում՝ դրանց պայմաններին համապատասխան, և Կառավարությունը բոլոր առումներով պետք է համապատասխանի իրավունքների նման կատարմանը: Կասկածից խուսափելու համար, Կայանը կարող է շահագործվել միայն Կառուցապատողի կողմից կամ Կայանի շահագործման վավեր լիցենզիա ունեցող այլ Անձի կողմից:

(c) The Onshore Collateral Agent and the Secured Parties will not be obliged to perform (and no Developer Party will be released from) any of the obligations or duties of either Developer Party under the Framework Agreement or otherwise in connection with the Project, the Plant and the Project Site unless the Onshore Collateral Agent (acting on instructions in accordance with Section 11 (*Onshore Collateral Agent*) below) expressly undertakes any such obligations or duties. The extent of any Senior Lender's liability will be limited to its actual interest in, and absent fraud, gross negligence or willful misconduct no officer, director, employee, shareholder or agent thereof will have any liability with respect to, the Framework Agreement or otherwise in connection with the Project, the Plant and the Project Site. Neither the Onshore Collateral Agent nor

(c) Տեղական Գրավի Գործակալը և Ապահովված Կողմերը պարտավոր չեն կատարել որևէ պարտականություն կամ պարտավորություն Շրջանակային Համաձայնագրի ներքո կամ այլապես Ծրագրի, Կայանի և Ծրագրի Տարածքի հետ կապված (և որևէ Կառուցապատողի Կողմ չի ազատվում դրանցից), բացառությամբ, եթե Տեղական Գրավի Գործակալը (ով գործում է ստորև բերված 11-րդ կետի (Տեղական Գրավի Գործակալ) համաձայն տրված հրահանգների հիման վրա) բացահայտորեն պարտավորվում է կատարել նման պարտավորությունները կամ պարտականությունները: Յուրաքանչյուր Ավագ Վարկատուի պատասխանատվության աստիճանը կսահմանվի իր փաստացի հետաքրքրությամբ, և խարդախության, կոպիտ անփութության կամ դիտավորյալ չարաշահումների բացակայությամբ, և ոչ մի պաշտոնյա, տնօրեն, աշխատակից, բաժնետեր կամ գործակալ, պատասխանատվություն չի կրի Շրջանակային Համաձայնագրի կամ այլապես Ծրագրի, Կայանի և Ծրագրի Տարածքի հետ կապված: Ոչ Տեղական Գրավի Գործակալը, ոչ էլ իր որևէ պաշտոնյա, տնօրեն, աշխատակից, բաժնետեր կամ գործակալ,

any officer, director, employee, shareholder or agent of the Onshore Collateral Agent shall have any liability under the Framework Agreement or otherwise in connection with the Project, the Plant and the Project Site (except for its own gross negligence or willful misconduct, as determined in a final, non-appealable judgment by a court of competent jurisdiction), or for any action taken or not taken by it under this Agreement at the request of the Secured Parties (including, through the Intercreditor Agent, as applicable). Except for the Secured Parties and as contemplated by this clause (c), a Person who is not a party to this Agreement shall have no rights under the English Contracts (Rights of Third Parties) Act 1999, as amended. Neither the Onshore Collateral Agent nor any transferee as contemplated by the Security Documents or any other Secured Party will assume liability for, or be subject to any defense against or offset from, claims of the Government arising from the Developer Parties' acts or omissions or from any acts or omissions of any other Person prior to its express assumption of obligations as provided for in clause (b) above.

պատասխանատվություն չեն կրի Շրջանակային Համաձայնագրի կամ Ծրագրի, Կայանի և Ծրագրի Տարածքի հետ կապված (բացառությամբ իր սեփական կոպիտ անփութության կամ դիտավորյալ արարքի համար, ինչպես կորոշվի իրավասու դատարանի վերջնական անբողոքարկելի որոշմամբ) կամ սույն Պայմանագրի շրջանակներում ձեռնարկված կամ չկիրառված գործողությունների համար, Ապահովված Կողմերի պահանջով (այդ թվում, Միջնորդ վարկատուի միջոցով, ինչպես կիրառելի է): Բացառությամբ Ապահովված Կողմերի և համաձայն սույն (c) կետի, որևէ Անձ, ով սույն Պայմանագրի կողմ չի հանդիսանում, չպետք է ունենա որևէ իրավունք համաձայն Անգլիական Պայմանագրերի մասին 1999 թ-ի (Երրորդ Կողմի Իրավունքներ) Ակտի՝ փոփոխություններով հանդերձ: Ո՛չ Տեղական Գրավի Գործակալը, ո՛չ էլ ցանկացած փոխանցառու, ինչպես նախատեսված է Ապահովման Փաստաթղթերում կամ որևէ այլ Ապահովված Կողմ, պատասխանատվություն չէ ստանձնի, և նրանց նկատմամբ կիրառելի չեն լինի Կառավարության որևէ պաշտպանության միջոցներ, պահանջներ և հաշվանցներ, որոնք բխում են Կառուցապատողի Կողմերի գործողություններից կամ անգործությունից կամ որևէ այլ Անձի գործողություններից կամ անգործությունից, մինչև նրանց կողմից (b) կետում նախատեսված պարտավորությունների բացահայտ ստանձնումը,

(d) Upon the exercise by the Onshore Collateral Agent of any of the remedies under the Movable Property Pledge Agreement in respect of the

(d) Շրջանակային Համաձայնագրի նկատմամբ Շարժական Գույքի Գրավի Պայմանագրի համաձայն ցանկացած միջոց Տեղական Գրավի Գործակալի կողմից իրականացվելուց հետո, Տեղական Գրավի Գործակալը կարող է որևէ

Framework Agreement, the Onshore Collateral Agent may assign its rights and interests and the rights and interests of the Developer Parties under the Framework Agreement to any Eligible Transferee or the Government. The Onshore Collateral Agent shall as soon as reasonably practicable notify the Government of any proposed transferee. For purposes of this Agreement, “Eligible Transferee” shall mean a Person that (i) expressly assumes in writing all of the outstanding and future obligations of the Developer Parties under or pursuant to the Framework Agreement and the Side Agreement, (ii) either (A) has experience in operating gas-fired power plants with generating capacity of not less than 100 MW and has, or will be able to obtain in the ordinary course of business, the Applicable Permits to own and operate the Plant or (B) has been agreed between the Government and the Secured Parties as qualified to operate the Project, the Plant and the Project Site, (iii) is not organized under, directly or indirectly controlled by or from or located in, any country (A) with which the Government does not have diplomatic relations (B) that is openly hostile towards the Republic of Armenia or (C) that is openly supportive of hostility towards the Republic of Armenia, and (iv) is not openly supportive of hostility towards the Republic of Armenia. Upon such assignment and

Իրավասու Փոխանցառուի կամ Կառավարությանը զիջել իր իրավունքները և շահերը, ինչպես նաև Կառուցապատողի Կողմերի Շրջանակային Համաձայնագրից բխող շահերը և իրավունքները: Տեղական Գրավի Գործակալը պարտավոր է հնարավորինս շուտ տեղեկացնել Կառավարությանը ցանկացած առաջարկվող փոխանցառուի մասին: Սույն Պայմանագրի նպատակների համար «Իրավասու Փոխանցառու» եզրույթը նշանակում է անձ, ով (i) բացահայտ կերպով ստանձնում է Կառուցապատողի Կողմերի Շրջանակային Համաձայնագրով և Հավելյալ Համաձայնագրով նախատեսված կամ դրանցից բխող բոլոր չմարված և ապագա պարտավորությունները, (ii) կամ (A) ունի 100 ՄՎտ-ից ոչ պակաս հզորություն ունեցող շոգեգազային էլեկտրակայանների շահագործման փորձ և ունի կամ բնականոն ընթացքում կկարողանա ստանալ Կայանը սեփականության իրավունքով տիրապետելու և շահագործելու համար անհրաժեշտ Կիրառելի Թույլտվությունները կամ (B) Կառավարության և Ապահովված Կողմերի միջև ձեռք բերված համաձայնությամբ դիտվում է որպես որակավորված՝ Ծրագիրը, Կայանը և Ծրագրի տարածքը շահագործելու համար, (iii) կազմակերպված չէ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի վերահսկվում որևէ պետության կողմից կամ պետությունից. (A) որի հետ Կառավարությունը չունի դիվանագիտական հարաբերություններ, (B) որը բացահայտ թշնամաբար է տրամադրված Հայաստանի Հանրապետության նկատմամբ կամ, (C) որը բացահայտորեն սատարում է ընդդեմ Հայաստանի Հանրապետության ուղղված թշնամական տրամադրությունները, և (iv) չի հանդիսանում ընդդեմ Հայաստանի Հանրապետության ուղղված թշնամական տրամադրությունները բացահայտորեն սատարող: Նման զիջման և ստանձնման դեպքում Տեղական Գրավի Գործակալը և Ավագ

assumption, the Onshore Collateral Agent and the Senior Lenders shall be relieved of all obligations, if any, under the Framework Agreement arising after such assignment and assumption.

Վարկատուները պետք է ազատվեն Շրջանակային Համաձայնագրի ներքո բոլոր պարտավորություններից, եթե այդպիսիք առկա են եղել, որոնք առաջացել են նման զիջումից և ստանձնումից հետո:

## 8. New Framework Agreement

## 8. Նոր Շրջանակային Պայմանագիր

If the Framework Agreement is rejected by a trustee or similar administrator or otherwise terminated in any bankruptcy, insolvency or similar proceeding involving either Developer Party, or as a result of any default, breach or other similar condition, and if the Secured Parties so request, then in each case, the Government will enter into a new framework agreement and a new side agreement with the Secured Parties (or their Eligible Transferee). The new framework agreement and the new side agreement will have a term equal to the remainder of the originally scheduled term of the Framework Agreement and the Side Agreement, and otherwise contain the same conditions, agreements, terms, provisions and limitations as the original Framework Agreement and the original Side Agreement (except for any requirements that have been fulfilled by either Developer Party and the Government prior to such rejection or termination). References in this Agreement to the "Framework Agreement" and the "Side Agreement" will be deemed also to refer to such new framework agreement and new side agreement.

Եթե Շրջանակային Համաձայնագիրը մերժվում է հավատարմատարի կամ համանման կառավարչի կողմից կամ այլապես դադարեցվում է որևէ սնանկության կամ նմանատիպ վարույթի հետևանքով, որում ներգրավված է Կառուցապատողի Կողմը, կամ ցանկացած կետանցի, խախտման կամ այլ նմանատիպ պայմանի հետևանքով, և եթե Ապահովված Կողմերը պահանջում են, ապա յուրաքանչյուր դեպքում Կառավարությունը նոր շրջանակային համաձայնագիր և նոր հավելյալ համաձայնագիր է կնքում Ապահովված Կողմերի (կամ նրանց Իրավասու Փոխանցառուի) հետ: Նոր շրջանակային համաձայնագրի և նոր հավելյալ համաձայնագրի գործողության ժամկետը պետք է հավասար լինի սկզբնական Շրջանակային Համաձայնագրի և սկզբնական Հավելյալ Համաձայնագրի գործողության ժամկետի մնացյալ մասին, և պարունակի նույն պայմանները, համաձայնությունները, դրույթները և սահմանափակումները, ինչպես նախատեսված են սկզբնական Շրջանակային Համաձայնագրով և Հավելյալ Համաձայնագրով (բացառությամբ այն պահանջների, որոնք կատարվել են որևէ Կառուցապատողի Կողմի և Կառավարության կողմից, մինչև այդ մերժումը կամ դադարեցումը): Սույն Պայմանագրում «Շրջանակային Համաձայնագրին» և «Հավելյալ Համաձայնագրին» կատարվող հղումները պետք է դիտվեն որպես հղումներ նաև այդ նոր շրջանակային համաձայնագրին և հավելյալ համաձայնագրին:

## 9. Assistance with Government Authorities

To the extent permitted by the Applicable Laws, the Government agrees to cause any applicable Government Authority to take, or refrain from taking, any action as would be necessary to give effect to Sections 3 (*Securities Assignment in connection with any Debt Financing*), 4 (*Payment to be made to Secured Accounts*), 5 (*Limitations on Fundamental Changes*), 6 (*Sharing of Information and Notice of Material Events*), 7 (*Onshore Collateral Agent's Notice and Cure Rights*) and 8 (*New Framework Agreement*) of this Agreement assuming for such purpose that such Government Authority were the Government, as party hereto.

## 9. Պետական Մարմինների աջակցությունը

Կիրառելի օրենքով թույլատրելի սահմաններում, Կառավարությունը համաձայնվում է ապահովել, որ ցանկացած համապատասխան Պետական Մարմին ձեռնարկի ցանկացած գործողություն կամ ձեռնպահ մնալ որևէ գործողություն ձեռնարկելուց, որը անհրաժեշտ կլինի սույն Պայմանագի 3 (Փոխառու Ֆինանսավորման հետ կապված Ապահովում Իրավունքի Զիջմամբ), 4 (Ապահովված Հաշիվներին կատարվող վճարումները), 5 (Հիմնարար փոփոխությունների սահմանափակումը), 6 (Տեղեկատվության տրամադրումը և էական իրադարձությունների մասին ծանուցումը), 7 (Տեղական Գրավի Գործակալի ծանուցում և խախտման վերացման իրավունքներ) և 8 (Նոր Շրջանակային Պայմանագիր) կետերը կատարելու համար, և այդ նպատակից ելնելով, պետք է համարվի որ նման Պետական Մարմինը գործում է որպես սույն Պայմանագրի կողմ հանդիսացող Կառավարություն:

## 10. Representations

The Government hereby agrees to provide to the Onshore Collateral Agent from time to time within ten (10) days of request a representation letter in the form attached as Appendix B.

## 10. Հավաստումները

Սույնով Կառավարությունը համաձայնում է ժամանակ առ ժամանակ, համապատասխան պահանջ ստանալուց հետո տասը (10) օրվա ընթացքում, Տեղական Գրավի Գործակալին տրամադրել հավաստման գրություն՝ կից Հավելված B-ում սահմանված ձևով:

## 11. Onshore Collateral Agent

The parties acknowledge and agree that the Onshore Collateral Agent has been appointed by the Senior Lenders as their common agent pursuant to the Collateral Agency and Intercreditor Agreement and certain other Financing Documents dated as of the date hereof and in

## 11. Տեղական Գրավի Գործակալ

Կողմերը ընդունում և համաձայնվում են, որ Տեղական Գրավի Գործակալն Ավագ Վարկատուների կողմից նշանակվել է որպես իրենց համատեղ գործակալ՝ համաձայն Տեղական Գրավի Գործակալության և Միջվարկատուական Համաձայնագրի և որոշակի այլ Ֆինանսավորման Փաստաթղթերի, որոնք թվագրված են սույն

acting (or refraining from taking any action) under this Agreement the Onshore Collateral Agent shall act (or refrain from acting) in accordance with the instructions of the Intercreditor Agent (itself acting on the instructions of the Instructing Group (as defined in the Common Terms Agreement)) pursuant to the terms of the Collateral Agency and Intercreditor Agreement and the Financing Documents.

Պայմանագրի ամսաթվով, և Տեղական Գրավի Գործակալը, գործելով (կամ ձեռնպահ մնալով որևէ գործողությունից) սույն Պայմանագրի ներքո, գործում է (կամ ձեռնպահ է մնում որևէ գործողությունից)՝ Միջվարկատուական Գործակալի (որն իր հերթին գործում է Հանձնարարող Խմբի (ինչպես սահմանված է Ընդհանուր Պայմանների Մասին Համաձայնագրում) հանձնարարությունների հիման վրա) հրահանգների հիման վրա՝ համաձայն Տեղական Գրավի Գործակալության և Միջվարկատուական Պայմանագրի և Ֆինանսավորման Փաստաթղթերի պայմանների:

**12. Clarifications**

**12. Պարզաբանումներ**

The parties hereto agree as set forth in Appendix A which by reference is made part hereof.

Սույնով Կողմերը համաձայնվում են Հավելված Ա-ում նշված պայմաններին, որը հղմամբ կազմում է սույն Պայմանագրի մաս:

**13. Notices**

**13.Ծանուցումներ**

All notices required under this Agreement will be delivered in writing by email, fax or international courier to the applicable party at the address provided for in the Framework Agreement or, with respect to the Onshore Collateral Agent or the Senior Lenders, addressed to:

Սույն Պայմանագրով պահանջվող բոլոր ծանուցումները պետք է համապատասխան կողմին ուղարկվեն գրավոր ձևով՝ էլ. փոստով, ֆաքսով կամ միջազգային առաքիչի միջոցով՝ Շրջանակային Համաձայնագրում նշված հասցեով, կամ Տեղական Գրավի Գործակալին կամ Ավագ Վարկատուներին վերաբերելու դեպքում՝ հետևյալ հասցեներով.

Onshore Collateral Agent:

Ameriabank CJSC
Kamar Business Center
2, V. Sargsyan Str.
Yerevan 0010
Armenia

Facsimile: +374 10 561111
E-mail: legal@ameriabank.am and davit.sokhakyan@ameriabank.am
Attention: Davit Sokhakyan,

Տեղական Գրավի Գործակալ.

Ամերիաբանկ ՓԲԸ
Կամար Բիզնես Կենտրոն
Վազգեն Սարգսյանի 2
ք.Երևան 0010
Հայաստան

Ֆաքս. +374 10 561111
Էլ-փոստ. legal@ameriabank.am և davit.sokhakyan@ameriabank.am
Ուղղված. Դավիթ Սոխակյանին

or at such other address that a party hereto may notify to each other party from time to time.

կամ այնպիսի այլ հասցեով, որի մասին սույն Պայմանագրի կողմերը ժամանակ առ ժամանակ ծանուցում են միմյանց:

All such notices shall be deemed received on the date of receipt by the recipient thereof if received prior to 5:00 p.m. in the place of receipt and such day is a Business Day in the place of receipt. Otherwise, any such notice, request or communication shall be deemed to not have been received until the next succeeding Business Day in the place of receipt.

Բոլոր այդպիսի ծանուցումները պետք է ստացողի կողմից համարվեն ստացված ստացման օրը, եթե դրանք ստացվել են մինչև երեկոյան 5:00-ն ընդունման վայրում, եթե այդ օրը համարվում է Աշխատանքային Օր այն երկրում, որտեղ այն ստացվում է: Հակառակ պարագայում ցանկացած այդպիսի ծանուցում, պահանջ կամ հաղորդում պետք է համարվի չստացված մինչև հաջորդ Աշխատանքային Օրը այն երկրում, որտեղ այն ստացվում է:

**14. Binding Effect**

**14.Պարտադիր ուժը**

This Agreement will be binding upon and inure to the benefit of the respective successors and permitted assigns of the Government, each Developer Party, the Secured Parties and the Onshore Collateral Agent.

Սույն Պայմանագիրը պարտադիր է և գործում է հօգուտ Կառավարության, յուրաքանչյուր Կառուցապատողի Կողմի, Ապահովված Կողմերի և Տեղական Գրավի Գործակալի համապատասխան իրավահաջորդների և թույլատրելի ցեսիոներների:

**15. Assignment**

**15. Զիջում**

No party hereto (other than the Senior Lenders) may assign this Agreement without the prior written consent of the other parties hereto (such consent not to be unreasonably withheld or delayed); *provided that* the Onshore Collateral Agent shall be permitted to assign this Agreement to any institution assuming its responsibilities as onshore collateral agent under the Financing Documents, it being understood that any such institution shall (a) be an

Սույն Պայմանագրի որևէ կողմ (բացառությամբ Ավագ Վարկատուների) չի կարող զիջել սույն Պայմանագիրն առանց մյուս կողմերի նախնական գրավոր համաձայնության (այդ համաձայնությունը չպետք է անհիմն մերժվի կամ ձգձգվի). **պայմանով, որ** Տեղական Գրավի Գործակալին թույլատրվում է սույն Պայմանագիրը զիջել ցանկացած հաստատության, որը ստանձնում է իր պարտականությունները որպես տեղական գրավի գործակալ Ֆինանսավորման Փաստաթղթերի համաձայն, հաշվի առնելով, որ ցանկացած նման հաստատություն պետք է լինի (a) Տեղական Գրավի

internationally recognized provider of agency services of the type provided by the Onshore Collateral Agent, (b) be organized under, controlled by and from and located in the United States of America, the United Kingdom, a member-state of the European Union, Canada or Switzerland and (c) not be determined in good faith by the Republic of Armenia to give rise to a threat to Armenia's national security if becoming the owner or operator of the Project, Plant or Project Site; *provided further* that the Senior Lenders, any assignee of the Senior Lenders and any assignee thereafter shall undertake that any assignment of this Agreement shall not be made to an Ineligible Assignee. For purposes of this Article 15, "**Ineligible Assignee**" shall mean a person that is openly hostile to, or openly supportive of hostility towards, the Republic of Armenia. For the avoidance of doubt, the Senior Lenders will not have any obligation under this Agreement nor do they assume any liability in respect of any assignee complying with this undertaking.

Գործակալի կողմից տրամադրվող գործակալական ծառայությունների նման ծառայություններ մատուցող միջազգայնորեն ճանաչված կազմակերպություն, (b) կազմակերպված լինի, գտնվի և հսկվի Միացյալ Նահանգներից, Միացյալ Թագավորությունից, Եվրոպական Միության անդամ-պետությունից, Կանադայից կամ Շվեյցարիայից, և (c) Հայաստանի Հանրապետության կողմից բարեխղճորեն չի բնորոշվել որպես Հայաստանի ազգային անվտանգության համար սպառնալիք առաջացնող, եթե նա դառնա Ծրագրի. Կայանի կամ Ծրագրի Տարածքի սեփականատերը կամ շահագործողը, ինչպես նաև այն պայմանով, որ Ավագ Վարկատուները, Ավագ Վարկատուների ցանկացած փոխանցառու և սույն Պայմանագրի հետագա որևէ փոխանցառու պարտավոր են ձեռնարկել, որ սույն Պայմանագրի որևէ զիջում չկատարվի Ոչ իրավասու Փոխանցառուի: Սույն հոդվածի 15-րդ կետի նպատակների համար «Ոչ իրավասու Փոխանցառու» նշանակում է անձ, որը բացահայտորեն ցուցաբերում է թշնամանք կամ բացահայտորեն աջակցում է թշնամանքի՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության: Կասկածից խուսափելու համար, Ավագ Վարկատուները սույն Պայմանագրով որևէ պարտավորություն չեն ստանձնում և ոչ մի պարտավորություն չեն ստանձնում նաև որևէ այլ փոխանցառուի նկատմամբ, որը համապատասխանում է սույն կետով ստանձնած պարտավորություններին:

## 16. Governing Law; Dispute Resolution

## 16. Կարգավորող օրենք. Վեճերի լուծում

(a) This Agreement including any non-contractual obligations arising out of or in connection with this Agreement will be governed by and construed in accordance with the laws of England.

(a) Սույն Պայմանագիրը, ներառյալ սույն Պայմանագրից բխող կամ դրա հետ կապված որևէ ոչ պայմանագրային պարտավորություն, կարգավորվում և մեկնաբանվում է Անգլիայի օրենքներին համապատասխան:

(b) In the event of any dispute,

(b) Որևէ վեճի, հակասության կամ պահանջի

controversy or claim arising out of or relating to this Agreement, or the breach termination or invalidity thereof, (a “**Dispute**”), the parties shall first try to solve it amicably. In this regard, any party may send a notice of Dispute to the other, and each of the Secured Parties (collectively), the Government and the Developer shall appoint, within ten (10) days from receipt of such notice of Dispute, a single representative having full power and authority to solve the Dispute. The representatives so designated shall meet as necessary in order to resolve such Dispute. If these representatives fail to resolve the matter within thirty (30) days from their appointment, or if a party fails to appoint a representative within the ten (10) day period set forth above, such Dispute will be referred to arbitration in accordance with clauses (c) through (m) below.

դեպքում, որոնք բխում են Սույն Պայմանագրից կամ կապված են դրա հետ կամ դրա խախտման, դադարեցման կամ անվավերության հետ («**Վեճ**»), կողմերը առաջին հերթին պետք է փորձեն լուծել այն հաշտությամբ: Այս առնչությամբ ցանկացած կողմ կարող է Վեճի մասին ծանուցում ուղարկել մյուս կողմին, և Ապահովված Կողմերը (միասնաբար), Կառավարությունը և Կառուցապատողը պետք է Վեճի մասին ծանուցումը ստանալուց հետո տասը (10) օրվա ընթացքում նշանակեն վեճը լուծելու լիակատար լիազորություն և իրավասություն ունեցող մեկական ներկայացուցիչ: Նշանակված ներկայացուցիչները պետք է, անհրաժեշտության դեպքում, հանդիպեն այդ Վեճը լուծելու համար: Եթե այդ ներկայացուցիչները չեն կարողանում լուծել այդ հարցը իրենց նշանակման պահից երեսուն (30) օրվա ընթացքում, կամ եթե կողմը վերը նշված տասը (10) օրվա ընթացքում չի նշանակում ներկայացուցիչ, ապա այդ Վեճը կհանձնվի արբիտրաժին՝ համաձայն ստորև նշված (c)-ից (m) կետերի:

(c) Any Dispute shall be finally settled by arbitration in accordance with the Rules of Arbitration of the International Chamber of Commerce then in effect (the “**ICC Rules**”). The London Court of International Arbitration shall act as appointing authority and administrator.

(c) Ցանկացած Վեճ պետք է ի վերջո լուծվի արբիտրաժի միջոցով՝ Միջազգային առևտրի պալատի այդ պահին գործող Արբիտրաժի Կանոններին համապատասխան («**ՄԱՊ Կանոններ**»): Միջազգային արբիտրաժի Լոնդոնի դատարանը հանդես է գալիս որպես նշանակող մարմին և կառավարիչ:

(i) Any party to this Agreement may, either individually or together with any other party to this Agreement, initiate arbitration proceedings pursuant to this

(i) Սույն Պայմանագրի ցանկացած կողմ կարող է առանձին կամ սույն Պայմանագրի որևէ այլ կողմի հետ համատեղ նախաձեռնել արբիտրաժային վարույթ, համաձայն սույն կետի՝ սույն Պայմանագրի մեկ կամ մի քանի

clause against one or more other parties to this Agreement by sending a notice of arbitration to all other parties to this Agreement (whether or not such parties are named as respondents in the notice of arbitration).

այլ կողմերի դեմ՝ արբիտրաժի ծանուցում ուղարկելով սույն Պայմանագրի բոլոր մյուս կողմերին (անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ կողմերը արբիտրաժի ծանուցմամբ համարվում են պատասխանող, թե ոչ):

(ii) Any party to this Agreement named as respondent in a notice of arbitration or a notice of claim may join any other party to this Agreement in any arbitration proceedings hereunder by submitting a written notice of claim against that party, provided that such notice is also sent to all other parties to this Agreement within thirty (30) days from the receipt by such respondent of the relevant notice of arbitration or notice of claim.

(ii) Արբիտրաժի ծանուցման կամ պահանջի ծանուցման մեջ որպես պատասխանող նշված սույն Պայմանագրի ցանկացած կողմ, կարող է սույն Պայմանագրի որևէ այլ կողմի հետ միանալ ցանկացած արբիտրաժային վարույթում, ներկայացնելով այդ կողմի դեմ պահանջի գրավոր ծանուցում, պայմանով, որ նման ծանուցումն ուղարկվում է նաև սույն Պայմանագրի բոլոր մյուս կողմերին՝ այդ պատասխանողի կողմից արբիտրաժի ծանուցումը կամ պահանջի ծանուցումը ստանալուց երեսուն (30) օրվա ընթացքում:

(iii) Any party to this Agreement may intervene in any arbitration proceedings hereunder by submitting a written notice of claim against any party to this Agreement, provided that such notice is also sent to all other parties to this Agreement within thirty (30) days from the receipt by such intervening party of the relevant notice of arbitration or notice of claim.

(iii) Սույն Պայմանագրի ցանկացած կողմ կարող է միջամտել ցանկացած արբիտրաժային վարույթին՝ ներկայացնելով սույն Պայմանագրի ցանկացած կողմի դեմ պահանջի գրավոր ծանուցում, պայմանով, որ նման ծանուցումն ուղարկվում է նաև սույն Պայմանագրի բոլոր մյուս կողմերին, այդ միջամտող կողմի կողմից համապատասխան արբիտրաժի ծանուցումը կամ պահանջի ծանուցումը ստանալուց երեսուն (30) օրվա ընթացքում:

(iv) Any party so joined or intervening shall be bound by any award rendered by the arbitral tribunal even if

(iv) Ցանկացած կողմի համար, որը միացել է կամ ներգրավվում է արբիտրաժային վարույթում, արբիտրաժային տրիբունալի

such party chooses not to participate in the arbitration proceedings.

կողմից կայացված ցանկացած որոշում պարտադիր է, նույնիսկ եթե այդ կողմը չի մասնակցում արբիտրաժային վարույթին:

(d) There shall be three arbitrators appointed as follows. If the request for arbitration names only one claimant and one respondent, and no party has exercised its right to joinder or intervention in accordance with clause (c) above, the claimant and the respondent shall each nominate one arbitrator within fifteen (15) days after the expiry of the period during which parties can exercise their right to joinder or intervention under clause (c) above. The third arbitrator, who shall act as presiding arbitrator, shall be nominated by agreement of the parties within thirty (30) days of the appointment of the second arbitrator. If any arbitrator is not nominated within these time periods, the appointing authority shall make the appointment(s).

(d) Արբիտրաժային վարույթում պետք է լինեն հետևյալ կերպ նշանակված երեք արբիտրներ: Եթե արբիտրաժ նշանակելու մասին պահանջով սահմանված է միայն մեկ հայցվոր և մեկ պատասխանող, և ոչ մի կողմ չի իրացրել վերը նշված (c) կետի համաձայն միանալու կամ ներգրավվելու իր իրավունքը, հայցվորն ու պատասխանողը յուրաքանչյուրը նշանակում է մեկ արբիտր՝ կողմերի կողմից վերը նշված (c) կետի համաձայն միանալու կամ ներգրավվելու իրենց իրավունքը իրացնելու ժամկետը լրանալու պահից տասնհինգ (15) օրվա ընթացքում: Երրորդ արբիտրը, որը հանդես է գալիս որպես նախագահող արբիտր, կողմերի համաձայնությամբ առաջադրվում է երկրորդ արբիտրի նշանակումից երեսուն (30) օրվա ընթացքում: Եթե այդ ժամանակահատվածում որևէ արբիտր չի առաջադրվել, ապա նշանակող մարմինը կատարում է նշանակումը (ները):

(e) If more than two parties are named in the notice of arbitration, or at least one party exercises its right to joinder or intervention in accordance with clause (d) above, the claimant(s) shall jointly nominate one arbitrator and the respondent(s) shall jointly nominate the other arbitrator, both within fifteen (15) days after the expiry of the period during which parties can exercise their right to joinder or intervention under clause (d) above. If the parties fail to nominate an arbitrator as

(e) Եթե արբիտրաժի ծանուցման մեջ նշվում է ավելի քան երկու կողմ կամ առնվազն մեկ կողմը վերը նշված (դ) կետի համաձայն իրացնում է միանալու կամ ներգրավվելու իր իրավունքը, ապա հայցվոր(ներ)ը միասին առաջադրում են մեկ արբիտր և պատասխանող(ներ)ը միասին առաջադրում են մյուս արբիտրին՝ երկու դեպքում էլ կողմերի կողմից վերը նշված (դ) կետի համաձայն միանալու կամ ներգրավվելու իրենց իրավունքը իրացնելու ժամկետը լրանալու պահից տասնհինգ (15) օրվա ընթացքում: Եթե կողմերը վերը նշված կարգով չեն առաջադրում արբիտր, ապա նշանակող մարմինը, ցանկացած կողմի պահանջով, նշանակում է բոլոր երեք

provided above, the appointing authority shall, upon the request of any party, appoint all three arbitrators and designate one of them to act as chairperson. If the claimant(s) and respondent(s) nominate the arbitrators as provided above, the third arbitrator, who shall act as chairperson, shall be nominated by agreement of the parties within thirty (30) days of the appointment of the second arbitrator. If the parties fail to nominate the chairperson as provided above, the chairperson shall be appointed by the appointing authority.

արբիտրներին և նրանցից մեկին նշանակում է որպես նախագահող: Եթե հայցվոր(ներ)ը և պատասխանող(ներ)ը առաջադրում են արբիտրներին վերը նշված կարգով, երրորդ արբիտրը, որն հանդես է գալիս որպես նախագահող, կողմերի համաձայնությամբ առաջադրվում է երկրորդ արբիտրի նշանակումից երեսուն (30) օրվա ընթացքում: Եթե կողմերը չեն կարողանում նշանակել նախագահողին վերը նշված կարգով, ապա վերջինս նշանակվում է նշանակող մարմնի կողմից:

(f) The legal seat of arbitration shall be London, England.

(f) Արբիտրաժի իրավաբանական նստավայրն է Լոնդոնը, Անգլիան :

(g) The language of arbitration shall be English. The arbitral tribunal shall have the power to authorize the production of evidence (other than briefs and memorials) in a language different from English, if it determines that, in view of the circumstances of the case, such process is more appropriate to attain efficiency, including reduction of costs.

(g) Արբիտրաժի լեզուն անգլերենն է: Արբիտրաժային տրիբունալը իրավունք ունի թույլատրել ներկայացնել ապացույցներ (բացառությամբ հայցադիմումների և միջնորդությունների) ոչ անգլերեն լեզվով, եթե այն գտնում է, որ գործի հանգամանքների առումով այդ ընթացակարգն ավելի նպատակահարմար է արդյունավետության, այդ թվում՝ ծախսերի կրճատման իմաստով:

(h) The parties shall endeavour to ensure that the award is rendered within three (3) months of the appointment of the arbitral tribunal unless the parties agree that such limit be extended or the arbitral tribunal, considering the nature of the Dispute, determines that such limit must be extended in the interest of justice.

(h) Կողմերը պետք է միջոցներ ձեռնարկեն ուղղված արբիտրաժային վճիռը արբիտրաժային տրիբունալի նշանակման պահից երեք (3) ամսվա ընթացքում կայացնելուն, բացառությամբ, եթե կողմերը համաձայնում են, որ այդ ժամկետը երկարաձգվի, կամ, Վեճի բնույթը հաշվի առնելով, արբիտրաժային տրիբունալը որոշում է, որ այդ ժամկետը պետք է երկարաձգվի արդարադատության շահերից ելնելով:

(i) In addition to the ICC Rules, the parties agree that the arbitration shall be conducted according to the IBA Rules on the Taking of Evidence in International Arbitration as current on the date of the commencement of the arbitration.

(i) Ի լրումն ՄԱՊ Կանոնների, կողմերը համաձայնվում են, որ արբիտրաժը պետք է իրականացվի արբիտրաժի մեկնարկման ամսաթվի դրությամբ գործող՝ Միջազգային արբիտրաժում ապացույցների ընդունման վերաբերյալ Փաստաբանների Միջազգային Պալատի Կանոնների համաձայն:

(j) Any provisions of the ICC Rules notwithstanding, the parties agree that there shall be no hearing and that the arbitral tribunal shall render its award on the basis of documents only, unless the parties agree that a hearing shall take place or the arbitral tribunal, considering the nature of the Dispute, determines that a hearing is required in the interest of justice.

(j) Անկախ ՄԱՊ Կանոնների որևէ դրույթից, կողմերը համաձայնում են, որ ոչ մի լսում չի լինի, և որ արբիտրաժային տրիբունալն իր վճիռը կկայացնի միայն փաստաթղթերի հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը համաձայնում են, որ պետք է տեղի ունենան լսումներ, կամ արբիտրաժային տրիբունալը, վեճի բնույթը հաշվի առնելով, որոշում է, որ լսումներ պետք է իրականացվեն՝ արդարադատության շահերից ելնելով:

(k) The arbitral tribunal is not empowered to award punitive damages, and each party hereby waives any right to seek or recover punitive damages with respect to any Dispute resolved by arbitration under this Section 16.

(k) Արբիտրաժային տրիբունալը լիազորված չէ սահմանել պատժիչ տույժեր, և յուրաքանչյուր կողմ սույնով հրաժարվում է սույն Բաժին 16-ի համաձայն արբիտրաժի կողմից լուծված ցանկացած Վեճի առնչությամբ պատժիչ տույժեր պահանջելու կամ բռնագանձնելու ցանկացած իրավունքից:

(l) The arbitral tribunal shall not be authorized to take or provide, and none of the parties hereof shall be authorized to seek from any judicial authority any interim measures of protection or pre-award relief (“**Interim Measures**”) against the other parties, any provisions of the ICC Rules notwithstanding; provided, however, that the foregoing restriction shall not

(l) Արբիտրաժային տրիբունալը լիազորված չէ ձեռնարկել կամ տրամադրել, և սույն Պայմանագրի որևէ կողմ չի կարող որևէ դատական մարմնից պահանջել ժամանակավոր պաշտպանության միջոցներ կամ նախնական բավարարում («**Ժամանակավոր Միջոցներ**»)՝ այլ կողմերի նկատմամբ, անկախ նրանից, թե ինչ է սահմանված ՄԱՊ Կանոնների որևէ դրույթով՝ այն պայմանով, սակայն, որ վերոհիշյալ սահմանափակումը չի կիրառվի գրավի



\\DC - 002424/000087 - 12156669 v22

apply in respect of any Interim Measures to preserve the value and/or integrity of the Collateral.

առարկայի արժեքի և/կամ ամբողջականության պահպանմանն ուղղված որևէ Ժամանակավոր Միջոցի նկատմամբ:

(m) If a Dispute under this Agreement concerns issues of substantially the same nature as those in a dispute arising out of the Framework Agreement or any of the Financing Documents, the parties to this Agreement agree to the consolidation of such arbitrations, provided that at the time any such arbitration is commenced, any party hereto may object to such consolidation, in which case the arbitration shall not be consolidated.

(m) Եթե սույն Պայմանագրով նախատեսված Վեճն ըստ էության վերաբերում է Շրջանակային Համաձայնագրից կամ որևէ Ֆինանսավորման Փաստաթղթերից բխող վեճի առարկա հանդիսացող հարցերին, ապա սույն Պայմանագրի կողմերը համաձայնվում են այդ արբիտրաժային գործերի միացմանը, պայմանով, որ ցանկացած նման արբիտրաժի մեկնարկման ժամանակ, սույն Պայմանագրի ցանկացած կողմ կարող է առարկել այդ միացման դեմ, ինչի արդյունքում արբիտրաժային վարույթները չպետք է միացվեն:

## 17. Senior Lender Immunities

## 17. Ավագ Վարկատուների անձեռնմխելիությունը

(a) The parties acknowledge and agree that no provision of this Agreement or of the ICC Rules, nor the submission to arbitration by IFC, in any way constitutes or implies a waiver, termination or modification by IFC of any privilege, immunity or exemption of IFC granted in the Articles of Agreement among its member countries including the Republic of Armenia, which established IFC, international conventions, or the Applicable Laws.

(a) Կողմերը ընդունում և համաձայնվում են, որ սույն Պայմանագրի կամ ՄԱՊ-ի կանոնների որևէ դրույթ կամ ՄՖԿ-ի կողմից արբիտրաժի դիմելը որևէ պարագայում չի հանդիսանում կամ ենթադրում ՄՖԿ-ի անդամ պետությունների, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից՝ ՄՖԿ-ի Հիմնադրման Համաձայնագրով, միջազգային կոնվենցիաներով կամ Կիրառելի Օրենքներով ՄՖԿ-ին շնորհված արտոնություններից, անձեռնմխելիությունից կամ բացառությունից հրաժարում, դադարեցում կամ փոփոխում ՄՖԿ-ի կողմից:

(b) The parties acknowledge and agree that no provision of this Agreement or of the ICC Rules, nor the submission to arbitration by OFID, in any way constitutes or implies a waiver,

(b) Կողմերը ճանաչում և համաձայնում են, որ սույն Պայմանագրի կամ ՄԱՊ-ի կանոնների որևէ դրույթ կամ ՕՖԻԴ-ի կողմից արբիտրաժ դիմելը որևէ պարագայում չի հանդիսանում կամ ենթադրում ՕՖԻԴ-ի և Հայաստանի

termination or modification by OFID of any privilege, immunity or exemption of OFID accorded under the Agreement for the Encouragement and Protection of Investment between OFID and the Republic of Armenia dated February 23, 2005 and entered into force May 22, 2006, or under international convention or any Applicable Laws.

Հանրապետության միջև ներդրումների խրախուսման և պաշտպանության մասին Համաձայնագրով, որը կնքվել է 2005թ-ի փետրվարի 23-ին և ուժի մեջ է մտել 2006թ-ի մայիսի 22-ին, միջազգային կոնվենցիաներով կամ Կիրառելի Օրենքներով ՕՖԻԴ-ին շնորհված արտոնություններից, անձեռնմխելիությունից կամ բացառությունից հրաժարում, դադարեցում կամ փոփոխում ՕՖԻԴ-ի կողմից:

(c) Nothing in this Agreement or of the ICC Rules, or any agreement, understanding or communication relating to this Agreement or of the ICC Rules (whether before or after the date of this Agreement), shall constitute or be construed as an express or implied waiver, renunciation, exclusion or limitation of any of the immunities, privileges or exemptions accorded to ADB under the Agreement Establishing the Asian Development Bank, which came into force on August 22, 1966, any other international convention or any Applicable Laws.

(c) Սույն Պայմանագրի կամ ՄԱՊ-ի Կանոններում որևէ դրույթ կամ սույն Պայմանագրին կամ ՄԱՊ-ի Կանոններին վերաբերող ցանկացած համաձայնություն, պայմանավորվածություն կամ հաղորդակցություն (անկախ սույն Պայմանագրից առաջ կամ դրանից հետո լինելու հանգամանքից) չի հանդիսանում կամ մեկնաբանվում որպես Ասիական Զարգացման Բանկը հիմնադրելու մասին համաձայնագրով, որը ուժի մեջ է մտել 1996թ-ի օգոստոսի 22-ին, միջազգային կոնվենցիաներով կամ Կիրառելի Օրենքներով ԱԶԲ-ին շնորհված արտոնություններից, անձեռնմխելիությունից կամ բացառությունից ակնհայտ կամ ենթադրյալ հրաժարում, զիջում, բացառում կամ սահմանափակում:

## 18. Sovereign Immunity

## 18. Ինքնիշխան անձեռնմխելիություն

Article 20.11 (*Sovereign Immunity*) of the Framework Agreement is incorporated by reference as if fully set forth in this Agreement, except that references therein to Framework Agreement are to be construed as references to this

Շրջանակային Համաձայնագրի 20.11-րդ կետը (*Ինքնիշխան անձեռնմխելիություն*) ներառված է սույն Պայմանագրում հղմամբ՝ ինչպես որ այն ամբողջապես սահմանված կլիներ սույն Պայմանագրում, բացառությամբ նրա, որ նրանում պարունակվող Շրջանակային Համաձայնագրին

| | |
|---|---|
| Agreement. | կատարվող հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն Պայմանագրին կատարվող հղումներ: |
| **19. Headings; English Language** | **19. Վերնագրեր, Անգլերեն լեզու** |
| (a) Headings appearing in this Agreement are used solely for convenience and are not intended to affect the interpretation of any provision of this Agreement. | (ա)Սույն Պայմանագրում առկա վերնագրերը օգտագործվում են միայն հարմարության համար և չպետք է ազդեն սույն Պայմանագրի որևէ դրույթի մեկնաբանման վրա: |
| (b) The Armenian translation of this Agreement is solely for convenience, and the English version of this Agreement shall govern in the event of inconsistency. | (բ) Սույն Պայմանագրի հայերեն թարգմանությունը բացառապես հարմարության համար է, իսկ անհամապատասխանության դեպքում կիրառվելու է սույն Պայմանագրի անգլերեն տարբերակը: |
| **20. Entire Agreement; Termination** | **20. Ամբողջական Պայմանագիրը.Դադարեցում** |
| (a) This Agreement and the Framework Agreement and the documents referred to herein constitute the complete agreement between the parties hereto and thereto with respect to the subject matter hereof and thereof. | (a) Սույն Պայմանագիրը և Շրջանակային Համաձայնագիրը և սույն Պայմանագրում նշված փաստաթղթերը կազմում են սույն Պայմանագրի և Շրջանակային Համաձայնագրի կողմերի միջև սույն Պայմանագրի և Շրջանակային Համաձայնագրի առարկայի վերաբերյալ ամբողջական պայմանագիրը: |
| (b) This Agreement shall automatically terminate (i) at any time by mutual written agreement of the Parties or (ii) upon written confirmation from the Onshore Collateral Agent of the full repayment by the Developer Parties of the financing under the Financing Documents. Upon termination of this Agreement, the Parties shall have no further rights and obligations and no provision shall survive any termination | (b) Սույն Պայմանագիրը ինքնըստինքյան դադարում է (i) ցանկացած ժամանակ Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ կամ (ii) Ֆինանսավորման Փաստաթղթերով Կառուցապատողի Կողմերի կողմից ամբողջական մարման Տեղական Գրավի Գործակալի կողմից գրավոր հաստատման դեպքում: Սույն Պայմանագրի գործողության դադարեցման դեպքում Կողմերը չունեն այլ իրավունքներ և պարտավորություններ, և որևէ դրույթ չի կարող ուժի մեջ մնալ սույն Պայմանագրի դադարեցումից հետո: |

hereof.

## 21. Amendments

This Agreement may be amended or modified only by an instrument in writing signed by the Parties. No waiver of any provision of this Agreement or any consent or approval to any departure therefrom shall be effective unless the same shall be in writing and signed by each Party so waiving such provision or consenting to or approving such departure. In the event of the substantial changes in the regulatory framework parties agree to negotiate in good faith such amendments that are necessary to affect the intentions of the parties herein.

## 21. Փոփոխություններ

Սույն Պայմանագիրը կարող է լրացվել կամ փոփոխվել միայն Կողմերի միջև ստորագրված գրավոր փաստաթղթի միջոցով: Սույն Պայմանագրի որևէ դրույթից հրաժարում կամ դրանից որևէ շեղման մասին որևէ համաձայնություն կամ հաստատում չունի իրավաբանական ուժ, եթե այն չի կատարվել գրավոր և ստորագրվել յուրաքանչյուր Կողմի կողմից, որը կատարում է այդ հրաժարումը կամ համաձայնվում է կամ հաստատում է նման շեղումը: Կարգավորող դաշտի էական փոփոխությունների դեպքում կողմերը համաձայնում են բարեխղճորեն բանակցել այն փոփոխությունները, որոնք կարող են ազդել կողմերի մտադրությունների վրա:

## 22. Severability

If any provision hereof is invalid and unenforceable in any jurisdiction, then, to the fullest extent permitted by law, (i) the other provisions hereof shall remain in full force and effect in such jurisdiction and shall be construed in order to carry out the intentions of the Parties as nearly as may be possible and (ii) the invalidity or unenforceability of any provision hereof in any jurisdiction shall not affect the validity or enforceability of such provision in any other jurisdiction.

## 22. Բաժանելիությունը

Եթե սույն Պայմանագրի որևէ դրյութ անվավեր է կամ անհարկադելի որևէ տարածքում, ապա օրենքով թույլատրելի առավելագույն չափով (i) սույն Պայմանագրի այլ դրույթները պետք է պահպանեն իրենց ուժն ու գործողությունը այդ տարածքում և պետք է մեկնաբանվեն այնպես, որպեսզի հնարավորինս իրականացվեն Կողմերի մտադրությունները, և (ii) որևէ տարածքում սույն Պայմանագրի որևէ դրույթի անվավեր կամ անհարկադրելի լինելը չպետք է ազդի այդ դրույթի վավերականության կամ հարկադրելիության վրա՝ որևէ այլ տարածքում:

## 23. Further Assurances

The Parties agree to cooperate with each other, and execute and deliver such other instruments and documents and take all such actions, as may be necessary or desirable to consummate the transactions contemplated in this Agreement.

## 23. Լրացուցիչ երաշխիքներ

Կողմերը համաձայնում են համագործակցել միմյանց հետ և ստորագրել և ներկայացնել այնպիսի այլ իրավաբանական գործիքներ և փաստաթղթեր, ինչպես նաև ձեռնարկել բոլոր այնպիսի գործողությունները, որոնք կարող են անհրաժեշտ կամ ցանկալի լինել սույն Պայմանագրով նախատեսված գործարքների կատարման համար:

## 24. Counterparts

This Agreement may be executed in any number of counterparts, all of which when taken together shall constitute one and the same instrument and any of the Parties may execute this Agreement by signing any such counterpart.

## 24. Օրինակներ

Սույն Պայմանագիրը կարող է ստորագրվել ցանկացած թվով օրինակներից, որոնք միասին վերցրած պետք է կազմեն մեկ և միևնույն պայմանագիրը, և Կողմերից յուրաքանչյուրը կարող է ստորագրել սույն Պայմանագիրը՝ ստորագրելով նման օրինակներից որևէ մեկը:

IN WITNESS WHEREOF, each of the parties hereto has caused this Agreement to be duly executed and delivered by its duly authorized officer as of the date first written above.

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՈՆՇՅԱԼԻ՝ սույն Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրը ապահովել է սույն Պայմանագրի ստորագրումը և ներկայացումը՝ իր պատշաճ կերպով լիազորված պաշտոնյայի կողմից՝ վերը նշված առաջին ամսաթվի դրությամբ:

[Signature pages follow]

[Ստորագրության էջերը՝ հաջորդիվ]

*[Signature Page to the Direct Agreement with Government]*
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագրի ստորագրությունների էջ]*

**GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

By: / Ստորագրություն. ________________

| | |
|---|---|
| Name: / Անուն. | Garegin Baghramyan / Գարեգին Բաղրամյան |
| Title: /Պաշտոն. | First Deputy Minister of Energy Infrastructures and Natural Resources of the Republic of Armenia / Հայաստանի Հանրապետության ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի առաջին տեղակալ |

*[Signature Page to the Direct Agreement with Government]*
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագրի ստորագրությունների էջ]*

**ARMPOWER CJSC**
**ԱՐՓԱՈՒԵՐ ՓԲԸ**

By: / Ստորագրություն. ________________
Name: / Անուն. SimoneGiovannini / Սիմոնե Ջովաննինի
Title: /Պաշտոն. Authrized Representative / Լիազորված ներկայացուցիչ

*[Signature Page to the Direct Agreement with Government]*
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագրի ստորագրությունների էջ]*

**RENCO S.P.A**
**ՌԵՆԿՈ Ս.Պ.Ա**

By: / Ստորագրություն. ________________
Name: / Անուն. Giovanni Rubini / Ջովաննի Ռուբինի
Title: /Պաշտոն. Chief Executive Officer / Գլխավոր գործադիր տնօրեն

*[Signature Page to the Direct Agreement with Government]*
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագրի ստորագրությունների էջ]*

**AMERIABANK CJSC,**
AS ONSHORE COLLATERAL AGENT
**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ,**
ՈՐՊԵՍ ՏԵՂԱԿԱՆ ԳՐԱՎԻ ԳՈՐԾԱԿԱԼ

By: / Ստորագրություն. ________________
Name: / Անուն.
Title: /Պաշտոն.

*[Signature Page to the Direct Agreement with Government]*
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագրի ստորագրությունների էջ]*

ASIAN DEVELOPMENT BANK
ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ

By: / Ստորագրություն. ________________
Name: / Անուն.
Title: /Պաշտոն.

*[Signature Page to the Direct Agreement with Government]*
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագրի ստորագրությունների էջ]*

DEG – DEUTSCHE INVESTITIONS- UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH
ԴԷԳ – ԴՈՅՉԵ. ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆՍ- ՈՒՆԴ ԷՆՏՎԻՔԼՈՒՆԳՍԳԵԶԵԼՇԱՖԹ ՄԲՀ

By: / Ստորագրություն. ________________
Name: / Անուն.
Title: /Պաշտոն.



\\DC - 002424/000087 - 12156669 v22

*[Signature Page to the Direct Agreement with Government]*
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագրի ստորագրությունների էջ]*

THE OPEC FUND FOR INTERNATIONAL DEVELOPMENT
ՕՊԵԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

By: / Ստորագրություն. ________________
Name: / Անուն.
Title: /Պաշտոն.

*[Signature Page to the Direct Agreement with Government]*
*[Կառավարության հետ Ուղղակի Պայմանագրի ստորագրությունների էջ]*

INTERNATIONAL FINANCE CORPORATION
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ

By: / Ստորագրություն. ________________
Name: / Անուն.
Title: /Պաշտոն.

## APPENDIX A
## Clarifications to the Framework Agreement

## Հավելում Ա
## Շրջանակային Համաձայնագրի պարզաբանումներ

Unless defined herein, capitalized terms used in this Clarification to the Framework Agreement will have the meanings assigned to them in the Direct Agreement.

Սույն փաստաթղթում սահմանված չլինելու դեպքում, Շրջանակային Համաձայնագրի սույն Պարզաբանման մեջ մեծատառով օգտագործված եզրույթներն ունեն Ուղղակի Պայմանագրում դրանց վերագրված իմաստը:

### 1. Repurchase Right Clarifications

### 1. Հետգնման Իրավունքի Պարզաբանումներ

(a) If a Government Authority takes an action as a result of a material breach by either Developer Party which action results directly or indirectly in the ownership or control of all or part of the Project, the Plant or the Project Site by a Government Authority or its designee, such action shall be without prejudice to the rights of the Onshore Collateral Agent and the Secured Parties as secured creditors with security interests over the Project, the Plant or the Project Site, which includes the retention by the Onshore Collateral Agent and the Secured Parties of such security interests and any associated liens regardless of any such change in ownership and control. In particular, without prejudice to any other legal or contractual remedy available to the Onshore Collateral Agent, the Secured Parties and the Government (as provided in Section 7(d) (*Onshore Collateral Agent's Notice and Cure Rights*)), the Onshore Collateral Agent and the Secured Parties shall be afforded the right to propose a transferee of the

a) Եթե որևէ Պետական Մարմին ձեռնարկի որևէ իրավաբանական գործողություն որևէ Կառուցապատողի Կողմի կողմից թույլ տված էական խախտման արդյունքում, ինչպիսի գործողության արդյունքում հաստատվում է որևէ Պետական Մարմնի կամ վերջինիս նշանակված անձի ուղակի կամ անուղակի սեփականությունը կան վերահսկողությունը Ծրագրի, Կայանի կամ Ծրագրի Տարածքի նկատմամբ, ապա նման գործողությունը պետք է չվնասի Տեղական Գրավի Գործակալի և Ապահովված Կողմերի՝ որպես ապահովված պարտատերերի, որոնք ունեն ապահովման շահ Ծրագրի, Կայանի կամ Ծրագրի Տարածքի նկատմամբ, իրավունքները, ինչը ներառում է Տեղական Գրավի Գործակալի և Ապահովված Կողմերի նման ապահովման շահի և դրա հետ կապված որևէ սահմանափակման պահպանումը, անկախ տնօրինման և վերահսկողության իրավունքի ցանկացած նման փոփոխության: Մասնավորապես, չվնասելով որևէ այլ իրավական կամ պայմանագրային միջոցներին, որոնք հասանելի են Տեղական Գրավի Գործակալին, Ապահովված Կողմերին և Կառավարությանը (ինչպես նախատեսված է Բաժին 7(d)-ում (Տեղական Գրավի Գործակալի ծանուցում և խախտման վերացման իրավունքներ)), Տեղական Գրավի Գործակալը և Ապահովված Կողմերը պետք է ունենան իրավունք

Project and their rights as secured creditors shall not be repealed, repudiated, rescinded or terminated.

առաջարկելու Ծրագրի փոխանցառուի և նրանց՝ որպես ապահովված պարտատերերի, իրավունքները չպետք է նվազեցվեն, չեղարկվեն, մերժվեն կամ դադարեցվեն:

(b) If the amount of the Government Event of Default Purchase Price or the Lender Prepayment Amount paid to the Developer pursuant to the Framework Agreement is not sufficient to satisfy all of the obligations of the Developer under the Financing Documents, the payment of the Government Event of Default Purchase Price or the Lender Prepayment Amount, as applicable, shall not operate to reduce or extinguish any claim of the Onshore Collateral Agent or the Secured Parties under the Financing Documents to the extent of such insufficiency, and their rights as secured creditors shall not be repealed, repudiated, rescinded or terminated to the extent of such insufficiency.

b) Եթե Շրջանակային Համաձայնագրի համաձայն Կառուցապատողին վճարված Կառավարություն Կետանցի Դեպքի Գնման Գնի գումարը կամ Վարկառուի Կանխավճարի Գումարը բավարար չէ Ֆինանսական Փաստաթղթերի շրջանակներում Կառուցապատողի բոլոր պարտավորությունները բավարարելու համար, ապա Կառավարություն Կետանցի Դեպքի Գնման Գնի գումարի կամ Վարկառուի Կանխավճարի Գումարի վճարումը չպետք է նվազեցնի կամ մարի Տեղական Գրավի Գործակալի կամ Ապահովված Կողմերի պահանջները Ֆինանսական Փաստաթղթեի շրջանակներում՝ առաջացած տարբերության մասով, և նրանց՝ որպես ապահովված պարտատերերի իրավունքները նման տարբերության մասով չպետք է նվազեցվեն, չեղարկվեն, մերժվեն կամ դադարեցվեն:

(c) If the amount of the Government Event of Default Purchase Price or the Lender Prepayment Amount paid to the Developer pursuant to the Framework Agreement is not sufficient to satisfy all of the obligations of the Developer under the Financing Documents any indebtedness owed by the Developer to the Government shall, to the extent not extinguished pursuant to the terms of the Framework Agreement, be subordinated in right of payment and liquidation to the obligations of the Developer under the Financing Documents.

c) Եթե Շրջանակային Համաձայնագրի համաձայն Կառուցապատողին վճարված Կառավարություն Կետանցի Դեպքի Գնման Գնի գումարը կամ Վարկառուի Կանխավճարի Գումարը բավարար չէ Ֆինանսական Փաստաթղթերի շրջանակներում Կառուցապատողի բոլոր պարտավորությունները բավարարելու համար, ապա ցանկացած պարտք, որը Կառուցապատողն ունի Կառավարության նկատմամբ, պետք է, այնքանով, որքանով այն մարված չէ Շրջանակային Համաձայնագրի պայմանների համաձայն, ստորադասվի վճարումների և լուծարման առումով՝ Ֆինանսական Փաստաթղթերի շրջանակներում Կառուցապատողի պարտավորություններին:

## 2. OTHER CLARIFICATIONS

(a) The Government covenants to the Developer Parties, the Onshore Collateral Agent and the Secured Parties that the easements (servitudes) on the Plant and the Project Site that exist on the date hereof will not prohibit or interfere with the creation or perfection of the Onshore Collateral Agent's and the Secured Parties' collateral security over the Project or any portion thereof or the enforcement of their rights in connection with such Collateral.

(b) The Government covenants to the Developer Parties, the Onshore Collateral Agent and the Secured Parties that the Government shall (i) in the event that the Power Purchase Agreement is not being performed as a result of any bankruptcy or insolvency of Electric Networks of Armenia CJSC, reasonably cooperate with the Developer Parties in (A) identifying a replacement power purchaser in Armenia or (B) establishing an alternative means of selling power, in each case, at terms no less favorable than the Power Purchase Agreement and (ii) reasonably cooperate with the Onshore Collateral Agent and the Secured Parties in obtaining any Applicable Permits or other governmental approvals in Armenia necessary for the Onshore Collateral Agent and the Secured Parties to enforce their rights and remedies under the

## 2. Այլ պարզաբանումներ

(a) Կառավարություն հավաստիացնում է Կառուցապատողի Կողմերին, Տեղական Գրավի Գործակալին և Ապահովված Կողմերին, որ the Կայանի և Ծրագրի Տարածքի նկատմամբ սույն Պայմանագրի ամսաթվի դրությամբ առկա սերվիտուտները չեն կանխի կամ խանգարի Տեղական Գրավի Գործակալի կամ Ապահովված Կողմերի երաշխավորված շահի ստեղծմանը և գրանցմանը Ծրագրի կամ դրա որևէ մասի նկատմամբ կամ նման գրավի առարկայի նկատմամբ իրենց իրավունքների հարկադրմանը:

(b) Կառավարությունը պարտավորվում է Կառուցապատողի Կողմերի, Տեղական Գրավի Գործակալին և Ապահովված Կողմերի առջև, որ Կառավարությունը՝ (i) այն դեպքում, եթե Էլեկտրոէներգիայի Գնման Պայմանագիրը չկատարվի՝ Հայաստանի էլեկտրական Ցանցեր ՓԲԸ-ի սնանկության կամ անվճարունակության հետևանքով, ողջամտորեն համագործակցել Կառուցապատողի Կողմերի հետ, որպեսզի (A) հայտնաբերվի էլեկտրական էներգիայի փոխարինող գնորդ Հայաստանում կամ (B) սահմանվի էլեկտրական էներգիայի վաճառքի այլընտրանքային միջոց, յուրաքանչյուր դեպքում ոչ պակաս նպաստավոր պայմաններով, քան Էլեկտրոէներգիայի Գնման Պայմանագրինը (ii) ողջամտորեն համագործակցելու է Տեղական Գրավի Գործակալի և Ապահովված Կողմերի հետ ձեռք բերելու համար ցանկացած Կիրառելի Թույլտվություն կամ այլ պետական հաստատում Հայաստանում, որոնք անհրաժեշտ են, որպեսզի Տեղական Գրավի Գործակալը և Ապահովված Կողմերը Ապահովման Փաստաթղերի համաձայն հարկադրեն իրենց իրավունքները և իրավունքների

Security Documents.

պաշտպանման միջոցները.

(c) The Government covenants to the Developer Parties, the Onshore Collateral Agent and the Secured Parties that, in the event that the Developer is obligated under the Applicable Laws or the terms of a Project Agreement to enter into a new or amended form of a Project Agreement, to the extent permitted by the Applicable Laws, the Government shall ensure that the terms and conditions of such new or amended Project Agreement will be no less favorable to the Developer Parties than the terms and conditions of the relevant Project Agreement as of the date hereof.

(c) Կառավարությունը պարտավորվում է Կառուցապատողի Կողմերի, Տեղական Գրավի Գործակալին և Ապահովված Կողմերի առջև, որ այն դեպքում, երբ Կառուցապատողին Կիրառելի Օրենքների կամ Ծրագրի Պայմանագրերի պայմանների համաձայն պարտավոր լինի կնքել որևէ նոր կամ փոփոխված ձևի Ծրագրի Պայմանագիր, ապա այնքանով, որքանով թույլատրվում է գործող Կիրառելի Օրենքներով, Կառավարություն պետք է ապահովի, որ նման նոր կամ փոփոխված Ծրագրի Պայմանագիրը լինի ոչ պակաս բարենպաստ Կառուցապատողի Կողմերի համար, քան համապատասխան Ծրագրի Պայմանագրինը՝ սույն Պայմանագրի օրվա դրությամբ:

## APPENDIX B
## Form of Representation Letter

## Հավելում Բ
## Հավաստման Գրության Ձև

[on letterhead of the Government]

[Կառավարության ձևաթղթի վրա]

[Onshore Collateral Agent]
Address: [•]
Attention: [•]
Facsimile: [•]
E-mail: [•]

[Տեղական Գրավի Գործակալ]
Հասցե. []
Ում. []
Ֆակս. []
Էլ. Փոստ []

[Date]

[Ամսաթիվ]

Dear [•],

Հարգելի []

This representation letter (“**Representation Letter”**) is being delivered to you in accordance with Section 10 of the Direct Agreement (the “**Direct Agreement**”) dated as of [•] February 2019 among ArmPower CJSC (the “**Developer**”), the Government of the Republic of Armenia (the **Government**), Renco S.p.A. (the “**Sponsor**” and together with the Developer, the “**Developer Parties**”) and Ameriabank CJSC in its capacity as onshore collateral agent, as amended, modified and supplemented from time to time. Unless defined otherwise, capitalized terms used in this Representation Letter will have the meanings assigned to them in the Direct Agreement.

Սույն հավաստման գրությունը (այսուհետ՝ «**Հավաստման Գրություն**») Ձեզ է ներկայացվում ԱրմՓաուեր ՓԲԸ-ի և Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ «**Կառավարություն**»), Ռենկո ՍպԱ-յի («Հովանավոր» և Կառուցապատողի հետ միասին՝ «Կառուցապատողի Կողմեր») և տեղական Տեղական Գրավի Գործակալի կարգավիճակում գործող «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջև 2019թ-ի փետրվարի [*]-ին ստորագրված Ուղղակի Պայմանագրի (այսուհետ՝ «Ուղղակի Պայմանագիր») բաժին 10-ի համաձայն՝ ինչպես այն կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել և լրացվել: Այլ բան սահմանված չլինելու դեպքում, սույն Հավաստման Գրությունում օգտագործված սահմանումներն ունեն նույն նշանակությունը, ինչ վերագրված է դրանց Ուղղակի Պայմանագրում:

The undersigned, [name], in [his] [her] capacity as [title] of the Government hereby certifies as of [date of certification requested by the Onshore Collateral Agent] that:

Ներքոստորագրյալ՝ [անուն]՝ հանդիսանալով Կառավարության [պաշտոն] սույնով հաստատում է [Տեղական Գրավի Գործակալի կողմից պահանջված հավաստման ամսաթվի] դրությամբ, որ.

(a) that each of its representations and warranties set forth in Articles 8.5

(a) իր հավաստումներից և երաշխավորումներից յուրաքանչյուրը, ինչպես սահմանված է

| | |
|---|---|
| (*Gas and Electricity Counter Delivery Scheme*), 8.6 (*Supply of Utilities*); 10.1 (*Sale and Purchase*); 12 (*Government Support*), and 19.2 (*Representations and Warranties of the Government*) of the Framework Agreement is true and complete as of the date hereof; | Շրջանակային Համաձայնագրի Հոդվածներ 8.5-ի (Գազի և Էլեկտրական էներգիայի Փոխադարձ Մատակարարման Սխեմա), 8.6-ի (Կոմունալ Ծառայությունների Մատակարարում) 10.1-ի (Առուվաճառք), 12-ի (Կառավարության աջակցություն) , 19.2-ի (Կառավարության Հավաստումներ և Երախավորումներ) սույն օրվա դրությամբ ճիշտ են և ամբողջական, |
| (b) neither the Government nor (to its knowledge) either Developer Party (i) is in default under the Framework Agreement or the Direct Agreement or (ii) has a right to claim, or has claimed, indemnification under Articles 13.2 (*Indemnification*), 13.3 (*Environmental Liability and Indemnification*) or 13.4 (*Indemnification for Fines and Penalties*) of the Framework Agreement; | (b) ո՛չ Կառավարությունը, ո՛չ էլ (որքանով, որ իրեն հայտնի է) որևէ Կառուցապատողի Կողմ (i) չի գտնվում կետանցի մեջ Շրջանակային Համաձայնագրի կամ Ուղղակի Պայմանագրի առումով և (ii) չունի պահանջի իրավունք և չի ներկայացրել պահանջ Շրջանակային Համաձայնագրի Հոդվածներ 13.2-ի (Պարտազերծում), 13.3-ի՝ (Բնապահպանական Պատասխանատվություն և Պարտազերծում) կամ 13.4-ի՝ (Պարտազերծում Տուգանքներից և Տույժերից) շրջանակներում, |
| (c) no Government Event of Default, Developer Event of Default, Adverse Condition Event, Lender Adverse Condition Event or Force Majeure Event has occurred and is continuing; and | (c) ոչ մի Կառավարության Կետանցի Դեպք, Կառուցապատողի Կետանցի Դեպք, Անբարենպաստ Պայմանի Իրադարձություն, Վարկատուի Անբարենպաստ Պայմանի Իրադարձություն կամ Անհաղթահարելի Ուժի Իրադարձությունը տեղի չի ունեցել և առկա չէ, և |
| (d) [additional representation(s) as may be reasonably requested by the Onshore Collateral Agent and reasonably agreed by the Government based on changed circumstance, completion of due diligence and final credit approval requirements between the date the form of Direct Agreement is finalized and the date it is executed]. | (d) [հավելյալ հավաստում(ներ), որոնք կարող են պահանջվել Տեղական Գրավի Գործակալի կողմից և ողջամտորեն հաստատվել Կառավարության կողմից՝ ելնելով փոփոխված հանգամանքներից, պատշաճության ուսումնասիրության ավարտի և վարկային ֆինանսավորման վերջնական հաստատման պահանջներից՝ Ուղղակի Պայմանագրի ձևը հաստատման օրվանից մինչև դրա կնքման օրը ընկած ժամանակահատվածում]. |
| Regards, | Հարգանքով |

| | |
|---|---|
| [Signature Block] | [Ստորագրություն] |
| **Schedule 1**<br>Developer Financing Documents | **Հավելված 1**<br>Կառուցապատողի Ֆինանսական փաստաթղթերը |
| Common Terms Agreement, dated 15 February 2019, by and among, *inter alios*, the Senior Lenders, the Intercreditor Agent and the Onshore Collateral Agent; | 2019 թվականի փետրվարի 15-ին, ի թիվս այլոց, Ավագ Վարկատուների, Միջվարկատուական Գործակալի և Տեղական Գրավի Գործակալի միջև ստորագրված Ընդհանուր Պայմանների Մասին Պայմանագիրը, |
| ADB Loan Agreement, dated 15 February 2019, between the Developer and ADB; | 2019 թվականի փետրվարի 15-ին Կառուցապատողի և ԱԶԲ-ի միջև ստորագրված ԱԶԲ Վարկային Պայմանագիրը, |
| DEG Loan Agreement, dated 15 February 2019, between the Developer and DEG; | 2019 թվականի փետրվարի 15-ին Կառուցապատողի և ԴԵԳ-ի միջև ստորագրված ԴԵԳ Վարկային Պայմանագիրը, |
| IFC Loan Agreement, dated 15 February 2019, between the Developer and IFC; | 2019 թվականի փետրվարի 15-ին Կառուցապատողի և ՄՖԿ-ի միջև ստորագրված ՄՖԿ Վարկային Պայմանագիրը, |
| OFID Loan Agreement, dated 15 February 2019, between the Developer and OFID; | 2019 թվականի փետրվարի 15-ին Կառուցապատողի և ՕՖԻԴ-ի միջև ստորագրված ՕՖԻԴ Վարկային Պայմանագիրը, |
| Agency Appointment Agreement, dated 15 February 2019, by and among, *inter alios*, the Developer, the Senior Lenders and the Onshore Collateral Agent; | 2019 թվականի փետրվարի 15-ին, *ի թիվս այլոց*, Կառուցապատողի, Ավագ Վարկատուների և Տեղական Գրավի Գործակալի միջև ստորագրված Գործակալների Նշանակման Պայմանագիրը, |
| Equity Contribution and Share Retention Agreement, dated 15 February 2019, by and among, *inter alios*, Renco Power CJSC, a corporation duly incorporated and organized under the laws of the Republic of Armenia, Siemens Project Ventures GmbH, a company duly incorporated and organized under the laws of the Federal Republic of Germany, the Sponsor, the Developer, the Intercreditor Agent and the Onshore Collateral Agent; | 2019 թվականի փետրվարի 15-ին, *ի թիվս այլոց*, Ռենկո Փաուեր ՓԲԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության օրենքների ներքո ստեղծված ընկերության, Սիմենս Փրոջեքթս Վենչըրս ԳմբՀ-ի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքների ներքո ստեղծված ընկերության, Հովանավորի, Կառուցապատողի, Միջվարկատուական Գործակալի և Տեղական Գրավի Գործակալի միջև ստորագրված Բաժնետիրական Կապիտալի Համալրման և Մասնակցության Բաժնի Պահպանման Պայմանագիրը, |

Collateral Accounts Agreement, dated on or about the date hereof, by and among the Developer, [Unicredit S.p.A.], a financial institution registered under the laws of Italy, acting in its capacity as offshore account bank, [Ameriabank CJSC], a closed joint stock company organized and existing under the laws of the Republic of Armenia, acting in its capacity as onshore account bank (the "**Onshore Account Bank**"), the Intercreditor Agent and the Law Debenture Trust Corporation p.l.c., a company incorporated under the laws of England and Wales, acting in its capacity as offshore collateral agent (the "**Offshore Collateral Agent**");

Սույն Պայմանագրի ամսաթվին կամ դրա մոտակայքում Կառուցապատողի, [Յունիկրեդիտ ՍպԱ]՝ Իտալիայի օրենքների ներքո գրանցված ֆինանսական կազմակերպության, որը գործում է որպես օֆշորային բանկ, [Ամերիաբանկ ՓԲԸ-ի]՝ Հայաստանի Հանրապետության օրենքների ներքո կազմակերպված և գոյություն ունեցող փակ բաժնետիրական ընկերության, որը գործում է որպես տեղական հաշվի բանկ («**Տեղական Հաշվի Բանկ**»), Միջվարկատուական Գործակալի և Լո Դիբենչը Թրասթ Քորփորեյշն փի-էլ-սի, Անգլիայում և Ուելսում հիմնադրված ընկերության («**Օտարերկրյա Գրավի Գործակալ**») միջև ստորագրված Գրավադրված Հաշիվների Պայմանագիրը,

The Corresponding Debt Agreement, dated [_______], 2019, by and among the Developer, the Senior Lenders and the Onshore Collateral Agent;

2019 թվականի [__]-ին Կառուցապատողի, Ավագ Վարկատուների և Տեղական Գրավի Գործակալի միջև ստորագրված Համապատասխան Պարտքի Պայմանագիրը,

The 1992 ISDA Master Agreement and a schedule thereto dated [_____], 2019, by and among the Developer and IFC acting in its capacity as interest rate hedge counterparty (the "**Interest Rate Hedging Agreement**");

Կառուցապատողի և ՄՖԿ-ի՝ տոկոսադրույքի հեջավորման կոնտրագենտի կարգավիճակում, 1992 թվականին ստորագրված Սվոփերի և ածանցյալ գործիքների միջազգային ասոցիացիայի (ՍԱԳՄԱ) գլխավոր համաձայնագիրը և դրան կից 2019թվականի [_____]-ին ստորագրված հավելվածը («**Տոկոսային Դրույքի Հեջավորման Համաձայնագիր**»),

Collateral Agency and Intercreditor Agreement, dated on or about the date hereof, by and among, *inter alios*, the Senior Lenders, the Onshore Collateral Agent and the Intercreditor Agent;

Սույն Պայմանագրի ամսաթվին կամ դրա մոտակայքում, *ի թիվս այլոց*, Ավագ Վարկատուների, Տեղական Գրավի Գործակալի և Միջվարկատուական Գործակալի միջև ստորագրված Գրավի Գործակալության և Միջվարկատուական Համաձայնագիրը,

The Account Pledge Agreement, dated on or about the date hereof, by and among the Developer and the Offshore Collateral Agent (the

Սույն Համաձայնագրի ամսաթվին ստորագրված Հաշիվների Գրավադրման Համաձայնագիրը՝ Կառուցապատողի և Տեղական Գրավի Գործակալի միջև («**Հաշիվների Գրավադրման**

| | |
|---|---|
| "**Account Pledge Agreement**"); | **Համաձայնագիր**»), |
| The Armenian Direct Debit Agreement, dated on or about the date hereof, by and among the Developer, the Onshore Account Bank and the Onshore Collateral Agent (the "**Armenian Direct Debit Agreement**"); | Սույն Պայմանագրի ամսաթվին կամ դրա մոտակայքում Կառուցապատողի, Տեղական Հաշվի Բանկի և Տեղական Գրավի Գործակալի միջև ստորագրված Հայկական Ուղղակի Դեբետագրման Պայմանագիրը («**Ուղղակի Դեբետավորման Հայաստանյան Պայմանագիր**»), |
| The Movable Property Pledge Agreement; | Շարժական Գույքի Գրավի Պայմանագիրը, |
| The Real Estate Pledge (Mortgage) Agreement, dated on or about the date hereof, by and among the Developer, the Senior Lenders and the Onshore Collateral Agent (the "**Real Estate Pledge Agreement**"); | Սույն Պայմանագրի ամսաթվին կամ դրա մոտակայքում Կառուցապատողի, Ավագ Վարկատուների և Տեղական Գրավի Գործակալի միջև ստորագրված Անշարժ Գույքի Գրավի (Հիփոթեքի) Պայմանագիրը («**Անշարժ Գույքի Գրավի Պայմանագիր**»), |
| The Armpower Share Pledge Agreement, dated on or about the date hereof, by and among Renco Power CJSC, a corporation duly incorporated and organized under the laws of the Republic of Armenia, the Senior Lenders and the Onshore Collateral Agent (the "**Armpower Share Pledge Agreement 1**"); | Սույն Պայմանագրի ամսաթվին կամ դրա մոտակայքում Ռենկո Փաուեր ՓԲԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության օրենքների ներքո ստեղծված ընկերության, Ավագ Վարկատուների և Տեղական Գրավի Գործակալի միջև ստորագրված ԱրմՓաուերի Բաժնեմասերի Գրավադրման Պայմանագիրը («**ԱրմՓաուերի Բաժնեմասերի Գրավադրման Պայմանագիր 1**»), |
| The Armpower Share Pledge Agreement, dated on or about the date hereof, by and among Siemens Project Ventures GmbH, a company duly incorporated and organized under the laws of the Federal Republic of Germany, the Senior Lenders and the Onshore Collateral Agent (the "**Armpower Share Pledge Agreement 2**"); | Սույն Պայմանագրի ամսաթվին կամ դրա մոտակայքում Սիմենս Փրոջեքթս Վենչրս ԳմբՀ-ի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքների ներքո ստեղծված ընկերության, Ավագ Վարկատուների և Տեղական Գրավի Գործակալի միջև ստորագրված ԱրմՓաուերի Բաժնեմասերի Գրավադրման Պայմանագիրը («**ԱրմՓաուերի Բաժնեմասերի Գրավադրման Պայմանագիր 2**»), |
| The Renco Power Share Pledge Agreement, dated on or about the date hereof, by and among Sponsor, the Senior Lenders and the Onshore Collateral Agent (the "**Renco Power** | Սույն Պայմանագրի ամսաթվին կամ դրա մոտակայքում Հովանավորի, Ավագ Վարկատուների և Տեղական Գրավի Գործակալի միջև ստորագրված Ռենկո Փաուեր Բաժնեմասերի Գրավադրման Պայմանագիրը՝ («**Ռենկո Փաուեր Բաժնեմասերի** |

**Share Pledge Agreement**");

**Գրավադրման** Պայմանագիր»),

The Performance Bond Assignment, dated on or about the date hereof, between the Developer and the Offshore Collateral Agent (the "**Performance Bond Assignment**");

Սույն Պայմանագրի ամսաթվին կամ դրա մոտակայքում Կառուցապատողի և Տեղական Գրավի Գործակալի միջև ստորագրված Կատարման Երաշխիքի Զիջման Պայմանագրի («**Կատարման Երաշխիքի Զիջման Պայմանագրի**»),

The Reinsurance Assignment, dated on or about the date hereof, between the [insurer] and the Offshore Collateral Agent (the "**Reinsurance Assignment**"); and

Սույն Պայմանագրի ամսաթվին կամ դրա մոտակայքում [ապահովագրողի] և Տեղական Գրավի Գործակալի միջև ստորագրված Վերապահովագրության Զիջման Պայմանագիրը («**Վերապահովագրության Զիջման Պայմանագիր**»), և

The Renco Subordinated Loan Assignment, dated on or about the date hereof, by and among the Sponsor and the Collateral Agent (the "**Renco Subordinated Loan Assignment**" together with the Account Pledge Agreement, the Armenian Direct Debit Agreement, the Movable Property Pledge Agreement, the Real Estate Pledge Agreement, the Armpower Share Pledge Agreement 1, the Armpower Share Pledge Agreement 2, the Renco Power Share Pledge Agreement, the Performance Bond Assignment and the Reinsurance Assignment, the "**Security Documents**").

Սույն Պայմանագրի ամսաթվին կամ դրա մոտակայքում Հովանավորի և Տեղական Գրավի Գործակալի միջև ստորագրված Ռենկոյի Ստորադաս Վարկի Զիջման Պայմանագիրը («**Ռենկոյի Ստորադաս Վարկի Զիջման Պայմանագիր**», Հաշիվների Գրավադրման Պայմանագրի, Հայկական Ուղղակի Դեբետագրման Պայմանագրի, Շարժական Գույքի Գրավի Պայմանագրի, Անշարժ Գույքի Գրավի Պայմանագրի, ԱրմՓաուերի Բաժնեմասերի Գրավադրման Պայմանագիր 1-ի, ԱրմՓաուերի Բաժնեմասերի Գրավադրման Պայմանագիր 2-ի, Ռենկո Փաուեր Բաժնեմասերի Գրավադրման Պայմանագրի, Կատարման Երաշխիքի Զիջման Պայմանագրի և Վերաապահովագրության Զիջման Պայմանագրի հետ միասին՝ «**Ապահովման Փաստաթղթեր**»):»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ



\\DC - 002424/000087 - 12156669 v22